Ես իրենց նման գործ տվող չեմ... Երբ լսեցի այդ հայտարարությունը, ակամայից հիշեցի հայտնի անեկդոտը. «Հարցնում են մեկին՝ ձեր մամուլն ազա՞տ է, նա պատասխանում է՝ եթե պապուլը տանը չի, մամուլն ազատ ա»: Ինչպես բոլոր համակարգերը, այնպես էլ ՀՌՀ-ն չի կարող լինել ազատ, սրանց հասկացած ազատությունը չունի արժեք:

Կարդացեք՝ էջ 4

Այն քարտեզից, որ ՔՊ-ի ռահվիրան խփել է դոշին ու ֆռֆռում է, ունի նաեւ Ալիեւը: Նույն քարտեզն է, պարզապես մեկի վրա գրված է «Իրական Հայաստան», մյուսի վրա՝ «Արեւմտյան Ադրբեջան»: Չեմ զարմանա, եթե մի օր պարզվի, որ այդ քարտեզ-կրծքանշանն արտադրվել է Ադրբեջանում եւ Հայաստան ներկրվել ադրբեջանական բենզինի հետ:

Կարդացեք՝ էջ 5

Չեմ դիմում քաղաքական գործիչներին, դիմում եմ մտավորականությանը. պիտի խոսել, թույլ չտալ, որ ժողովուրդը, թեկուզ ժամանակավոր՝ հավատա այդ կեղծ տեսություններին: Ժողովուրդն իր պատմությունն ունի, եւ այն պետք է շարունակվի: Մենք չենք կարող Վանա լճից, Սասունից հրաժարվել, սփյուռքահայությունից հրաժարվել:

Կարդացեք՝ էջ 7

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 45 (4180), 24 մարտ, երեքշաբթի, 2026

www.hraparak.am



Օրենքով գող Շահումյանցի Ժիրոն (Ժիրայր Բրուտյանը) 2021-ին կալանավորվեց՝ քրեական ենթամշակույթ կրող խմբավորում ղեկավարելու հոդվածով: Նրան մեղադրում էին, որ «զոն նայողի» գործառույթներ է կատարել՝ «դրսից բերված գրեֆներ» է բաժանել «Արմավիր» ՔԿՀ-ի 3-րդ մասնաշենքում պահվող անձանց, ապա հանձնարարել է անկարգություններ իրականացնել: Գործով անցնում են նաեւ քրեական հեղինակություն Կիլիկիացի Հարութիկը (Հարություն Թորոսյանը) եւ Արթուր Բրոյանը, որը քրեական ենթամշակույթ կրող խմբավորման մասնակից է: Գործը դատարան է մտել 2022-ին՝ 3 մեղադրյալով: Դատավոր Սուսաննա Գզոգյանը փոխել է օրենքով գողի խափանման միջոցը՝ 20 միլիոն դրամով: Եվ 3 տարվա դատաքննությունից հետո առաջին ատյանի դատարանն արդարացրել է նրան ու վերադարձրել խափանման միջոց 20 միլիոն դրամը: Արդարացվել է նաեւ Կիլիկիացի Հարութիկը: Բրուտյանի փաստաբան Հունան Բաբայանը հաստատեց մեր տեղեկությունը՝ նշելով, որ դատախազությունը բողոքարկել է դատավճիռը, սակայն դեռ նորություն չունեն: Հարցրինք նաեւ՝ Ժիրայր Բրուտյանն այլ քրեական վարույթով անցնո՞ւմ է: Ասաց, որ չի կարող պատասխանել: «Շահումյանցի Ժիրոն 2024-ին էլ էր ձերբակալվել. նրան եւ ուղեկիցներին գետնին պառկեցնելով՝ բերման էին ենթարկել, խմբի կազմում խուլիգանություն կատարելու մեղադրանքով, ապա ազատ էին արձակել»:

Կիրակի օրը Շենգավիթում քաղաքացին իր բնակարանի պատուհանից միջնամատ էր ցույց տվել Փաշինյանին: Նրան ուղեկցող ոստիկանության Շենգավիթի բաժնի պետ Արթուր Մկրտչյանը, մեր տեղեկություններով, նույն վայրկյանին հեռախոսով կապվել է ենթակաների հետ եւ փոխանցել շենքի հասցեն ու հարկը, որ ճշտեն քաղաքացու տվյալները եւ փոխանցեն իրեն: Ենթադրվում է, որ փորձելու են առնվազն բարդացնել քաղաքացու կյանքը, եթե ոչ այս փուլում, ապա ընտրություններից հետո, եթե, իհարկե, ՔՊ-ն վերարտադրվի եւ բացի իր «դավթարները», թե ով իրեն ոնց է պահել նախընտրական փուլում: Ի դեպ, Նիկոլ Փաշինյանին, իբրեւ թե ներկուսակցական քարոզարշավի այս փուլում մեծ թվով ՊՊԾ աշխատակիցներ են ուղեկցում, այսինքն՝ պետական միջոցները մսխվում են ներկուսակցական նպատակներով: Ուժայինների ծառայողները նաեւ քաղաքացիական հագուստով են ուղեկցում: Իսկ «Իմ քայլը» հիմնադրամն ակտիվ բարեգործություն է անում: Հիշեցնենք, որ քաղաքական ուժերի հետ փոխկապակցված հիմնադրամներն այս փուլում իրավունք չունեն բարեգործությամբ զբաղվել, դա նախընտրական փուլում քրեորեն պատժելի է:

Ատելության մունետիկը

Մի կողմ թողնենք՝ մետրոյի միջադեպը լա՞վ էր, թե՞ վատ, կարելի՞ էր երեխայի ներկայությամբ բղավել մոր վրա, եւ արդյո՞ք իր կողմից հանձնված Արցախի եւ թուրքի յաթաղանից մազապուրծ արցախցիների մասին կարելի է օգտագործել «փախած» արտահայտությունը: Տեսնենք, թե ինչ կատարվեց այդ միջադեպից հետո: Արցախցիների հանդեպ ատելության ու ագրեսիայի մի նոր հուժկու ալիք բարձրացավ, եւ ամեն տեսակի մարդաչնման էակներ հնարավորություն ստացան իրենց հոգու մաղձն Արցախի ու Արցախից Հայաստան տեղափոխված մեր հայրենակիցների վրա թափելու: Եվ դրա հրձիգը հենց ինքը՝ Նիկոլ Փաշինյանն էր: Այն մարդը, ով վերջին բրիֆինգում խոսում էր ատելության խոսքի դեմ պայքարի մասին, հանդիմանում էր լրագրողներին, որ չեն ուզում ատելության խոսքն արմատախիլ անել երկրից: Բոլոր նրանց, ովքեր կառարկեն, թե ինչ աներ Փաշինյանը, եթե այդ ատելությունը տարբեր լրատվամիջոցներ եւ անձինք են տարածում, սիրով հակափաստարկներ կբերեմ. ատելությունն ամենից շատ տարածողներն իշխանության հետ փոխկապակցված անձինք ու լրատվամիջոցներն են, հատկապես՝ ՔՊ-ի պաշտոնական կայքը: Եվ ատելության խոսքի ամենաթեժ հարթակը վարչապետի ՖԲ էջն է: Իսկ ի՞նչ կաներ նորմալ մարդը, եթե անգամ նման միջադեպ է եղել՝ ինքն իրեն սխալ է պահել, հետո գիտակցել է եւ անկեղծորեն ներողություն խնդրել հերոսի դուստր Արմին Մոսիյանից ու նրա որդուց՝ անզուսպ պահվածքի համար: Կաներ այն, ինչ անում ենք մենք. կհանձնարարեր մոդերացիա անել իրենց էջերում, որ արցախցիների հասցեին ոչ մի չար խոսք չգրվի: Կարգելեր իրենց լրատվամիջոցներին՝ պեղել գտնել այդ կնոջ հին գրառումները եւ թիրախավորել նրան: Վերջապես, լայվ կմտներ եւ քարաքոսների մասին խոսելու փոխարեն, կոչ կաներ դադարեցնել այդ նողկալի արշավն արցախցիների նկատմամբ:

ՔՊ «ուրախ ավտոբուսի» վոյաժները, պարզվում է, ազդում են անգամ որոշ ՔՊ-ականների նյարդերի վրա: Նույնիսկ նրանց, ովքեր այդ ավտոբուսի ուղեւորներ են: Մեզ բողոքեցին, որ իրենք ընդամենը որպես ֆոն, բուտաֆորիա են ծառայում Փաշինյանի համար, նա գրեթե միայնակ է տանում քարոզարշավը, ինքն է որոշում՝ ում իր մոտ կանգնեցնի, նստեցնի, կանչի եւ այլն: Շատերը հեռվից հետեւում են նրա՝ քաղաքացիների հետ հանդիպումներին, երբեմն անգամ ավտոբուսից չեն իջնում: Ժամանակին սուպերլիդերությունը մերժող առաջնորդը միապետ է դարձել, որը գնահատում է այն նազիր-վեզիրներին, ովքեր առավել ջանասիրաբար են կատարում ուսապարկի դերը եւ իր հրահանգները:

ՔՊ-Ն ԲՈՅԿՈՏՈՒՄ Է ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ

Վերջին օրերին, ինչպես հայտնի է, խորհրդարանի մշտական հանձնաժողովներում քննարկվում է կառավարության հնգամյա ծրագրի 2025 թվականի կատարողականը, եւ կառավարության տարբեր ներկայացուցիչներ գալիս ու հաշվետվություն են ներկայացնում օրենսդիրներին: Որքան էլ զարմանալի է, բայց երեկ տոտալ բոյկոտի մթնոլորտում են անցել արտաքին գործերի նախարարության մասին քննարկումները, այն պարագայում, երբ ՔՊ-ականներն իրենց քարոզչական գլխավոր թեզն են հռչակել խաղաղությունը, թե իբր այնպիսի հաջողակ արտաքին քաղաքականություն են վարում, որ կայուն եւ անշրջելի խաղաղություն են հաստատել: Իհարկե՝ այդ խաղաղությունը գործում է միայն ՔՊ-ի իշխանության շրջանակներում: Երեկ Արարատ Միրզոյանի՝ ԱԺ արտաքին հարաբերությունների հանձնաժողովում հաշվետվությանը, բառի բուն իմաստով, 3 ՔՊ-ական պատգամավոր էր մասնակցում, այն դեպքում, երբ նախկինում անգամ այդ հանձնաժողովի անդամ չհանդիսացող ՔՊ-ականներն էին ներկա լինում: Գուցե այսկերպ փորձում են ցույց տալ, որ Արարատ Միրզոյանը չէ խաղաղության կնքահայրը, այլ՝ Նիկոլ Փաշինյանը, սակայն փաստն այն է, որ Միրզոյանը ստիպված եղավ սպասել, որ նվազագույն թվով պատգամավորները ներկա գտնվեն՝ քվորում լինի, ու նոր նիստը սկսեն: Ի դեպ, նիստը վարող Մարիա Կարապետյանին լրագրողները հետ պահեցին կանոնակարգ-օրենքը խախտելու գայթակղությունից. նա ուզում էր նիստը սկսել առանց քվորումի, բայց դիտողությունից հետո սպասեց՝ մինչեւ ներկայանան: Իսկ Եվրահինտեգրման հանձնաժողովի նախագահ Արման Եղոյանը նիստը սկսեց առանց քվորումի. ներկա էին նա, Սոնա Ղազարյանը եւ ԱԳ փոխնախարար Վահան Կոստանյանը: Միայն նիստը սկսելուց հետո քննարկմանն ուշացումով ներկայացան «Հայաստան» դաշինքից Արմեն Գեւորգյանը եւ ՔՊ-ական Տաթեւիկ Գասպարյանը:

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔՆ ԻՇԽԱՆԱԿԱՆ Է, ՔԱՆԻ ՈՐ ԵՍ 45 ՏԱՐՈՒՄ ՍՏԵՂ ՈՉ ՄԻ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ՉԻ ԵԿԵԼ

«Ստեր գլխին տեղ ունես», «Ոտքդ պաքեմ», «Առանց քեզ մենք ոչ մի բան ենք». իրենց մարզ այցի գնացած Նիկոլ Փաշինյանին այս եւ այլ ինքնաստորացուցիչ արտահայտություններով էին դիմում Գեղարքունիքի՝ Գավառի, Մարտունու բնակիչները, ծափ էին տալիս, շողոքորթում, համբուրում ձեռքը, փաթաթվում: Նրանք մոռացել են 2023 թվականի Սոթքի, Նորաբակի կրակոցները, Սեւանի ու Արեւմտյան Ադրբեջանի վերաբերյալ Ալիեւի

դժգոհ քաղաքացիների չի սիրում եւ տարեցին արագ «գլխից ռադ արեց»՝ գցելով Անահիտ Ավանեսյանի վրա, ապա վերջինս չքվեց Նիկոլի կամերայի տեսադաշտից: Բայց ծերունու ձայնը մնաց կադրում: «Եթե սենց գնաց, չես նստելու»,- Փաշինյանին զգուշացնում էր տարեց մարդը:

«Հանդիպումներից ստացած ամենացավալի տպավորությունն այն է, որ ոչ մեկին չէին բերել: Նիկոլի հետ հանդիպողների մեծամասնությունն ինքնակամ էր եկել, ու բոլորն անձնական հարցեր էին տալիս»,- ասում է զրուցակիցս: Ինչո՞ւ՝ հարցնում եմ նրան, որը նախկինում ընդդիմություն էր, հետո մի շրջան պետական աշխատող դարձավ, բայց չհամակերպվեց ՔՊ-ականների հետ ու ազատվեց աշխատանքից: «Գեղարքունիքում Փաշինյանը լավ ձայն ա տանելու՝ մի 52 տոկոս: Պատճառը, իմ կարծիքով, ընդդիմության թերությունն է: Ընդդիմադիրներին խլացնում են տեղական մակարդակում: Այսինքն, եթե ընդդիմադիր չի գալիս, մնում է միակ հույսը իշխանությունը: Նա էլ, ի դեմս մարզպետի, ինչ-որ օգնություններ, կրած վնասի փոխհատուցումներ է տալիս: Իրենք հասկանում են, որ վաղը հայրենիք չեն ունենալու, որ սրանք հայրենիքը ծախում են, բայց երբ ասում ես մարդկանց էդքանը, հիշացնում են՝ անցյալ ընտրությանը ձայն տվեցինք, ինչ եղավ: Եվ իրոք՝ էս 4-5 տարում ստեղ ոչ մի ընդդիմադիր չի եկել»,- ասում է նախկին պաշտոնյան, որի անունն իր խնդրանքով չենք հրապարակում: Նա իր համերկրացիների նիկոլապաշտության սեփական բացատրությունն ունի՝ հիմնական պատճառը Հ1-ն է, «Լրաբերը», ինչպես մինչ օրս վարդենիսցիներն անվանում են Հանրայինի լուրերը: «Հ1-ն իրենց նորությունների հիմնական աղբյուրն է: Բայց պետք է հասկանալ, որ խոսքը տարեց բնակչության մասին է: Հիմա Գեղարքունիքի բնակչության մեծ մասը տեղափոխվել է, այստեղ հիմնականում տարեցներն են մնացել, գյուղերը մնացել են ծերերի վրա: Իրենց անասունը նայեցին, մտան տները, Հ1-ը միացրեցին, նստեցին: Իսկ ջահելությունը Նիկոլին չի ընդունում, բայց ջահելությունը հիմնականում գյուղերում չէ: Ամեն 10 ջահելից 1-ն է Նիկոլին ընդունում: «Լայվերում», եթե նկատում եք, հիմա միայն տարիքովներն են»:

Ոմանք հեռանում են ՔՊ-ից, ոմանք էլ, ինչպես Վարդենիս խոշորացված համայնքի քաղաքապետ Ահարոն Խաչատրյանը, մտնում են ՔՊ: Նա ՔՊ անդամ է դարձել մոտ երկու շաբաթ առաջ: Հիշեցնենք, որ Վարդենիսում նա համայնքապետ ընտրվեց 2021 թվականի դեկտեմբերին՝ որպես ընդդիմադիր: «Ահարոն Խաչատրյան» դաշինքը, որը 10 ձայն էր ստացել, միավորվեց քոչարյանական «Միասնական Վարդենիս» դաշինքի հետ, եւ 1 մանդատի առավելությամբ համայնքապետ ունեցան: Ահարոն Խաչատրյանին հեշտ չէր կառավարել քաղաքը: Անգամ բանալիներն էին նրանից գողացել, ու երդմնակալությունը բակում կատարեց: Ընդդիմադիր լինելով, նա հայտարարում էր, որ պետք է լեզու գտնի իշխանության հետ՝ հանուն համայնքի զարգացման, ասում էր. «Ինչի՞ համար պիտի դառնամ ՔՊ-ի կամակատար: Ես քաղաքականության մեջ ընդհանրապես չկամ»: Ու մեկ էլ հանկարծ մտավ ՔՊ: Ինչո՞ւ: Արդյո՞ք կոտրվեց այն բանից հետո, երբ քրեական գործ հարուցեցին իր դեմ: Ասում են՝ մոտ շրջապատում Ահարոն Խաչատրյանը հայտարարել է՝ 60 տարեկան մարդ եմ, գնայի նստեի՞, կամ պետք է հրաժարական տայի, կամ պետք է նստեի: Ուզում էինք նրան մի քանի հարց տալ, բայց Վարդենիսի համայնքապետն արդեն 2-3 ամիս է՝ չի պատասխանում լրագրողների զանգերին: Երեւի չգիտի ինչ պատասխանի, մամուլի քարտուղար էլ չունի: Նրա փոխարեն քաղաքապետի բջջայինին պատասխանում է օգնականը:

- Խնդրում եմ խոսափողը փոխանցել Ահարոն Խաչատրյանին, թե՞ նա սկզբունքորեն չի պատասխանում լրագրողներին:

- Համայնքի ղեկավարը զբաղված է, ոչ մեկից էլ կտրված չէ, ուղղակի զբաղված է, եթե ես կարող եմ պատասխանել՝ կպատասխանեմ:

- Ուզում էի իմանալ՝ ի՞նչ եղավ կոալիցիան: Նա քոչարյանականների հետ կոալիցիա կազմեց, դարձավ համայնքապետ, բայց հիմա ՔՊական է, դա ո՞նց եղավ:

- Ես նման հարցերի իրավասու չեմ պատասխանել:

- Ինչպե՞ս եղավ, որ Գեղարքունիքում, որտեղ բախումներ, լարվածություն է եղել ադրբեջանցիների հետ, մարդիկ ոչ մի անվտանգային հարց չտվեցին Փաշինյանին, Դուք՝ որպես մարզի բնակիչ ու քաղաքապետի օգնական, դա ինչպե՞ս եք բացատրում:

- Ես իրավասու չեմ անվտանգային եւ քաղաքական հարցերի պատասխանելու: Ոռոգման ջուր, խմելու ջուր, ասֆալտ՝ եթե հարցեր կան, տվեք, խնդիր չկա:

Մեր տեղեկություններով, երեկ «Ահարոն Խաչատրյան» եւ «Միասնական Վարդենիս» դաշինքը լուծարելու որոշում է ընդունվել, քանի որ աբսուրդ է, որ Ահարոն Խաչատրյանը ՔՊ-ական է, բայց ընդդիմադիր կոալիցիայի անդամ: Վարդենիսի քաղաքապետի խորհրդական Խաժակ Մկրտչյանը, որը ժամանակին ընդդիմադիր էր, ինչպես եւ Ահարոն Խաչատրյանը, նրա շտաբի պետն է եղել, բայց հետո շեֆի հետ ՔՊ անդամ դարձավ, հրաժարվեց պատասխանել մեր հարցին, ասաց, որ տեղյակ չէ, թե կա՞ արդյոք նման գործընթաց. «Մի բան կարող եմ ասել. եթե կոալիցիան ինչ-որ պայմանավորվածությունների արդյունքում է ձեւավորվում, կարող է ինչ-որ պայմաններից ելնելով էլ լուծարվել: Բայց ես տեղեկություն չունեմ»:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ԴԵՄ ՉԷ, ՈՐ ԱՆԳԱՄ ՄԱՐԴԻԿ ԻՐԵՆ ԱՏԵՆ, ՍԱԿԱՅՆ ՎԱԽԻՑ ՔՎԵ ՏԱՆ ԻՐԵՆ

«Դրապարակի» զրուցակիցը հոգեբան **Միհրդատ Մադաթյանն** է:

- Նիկոլ Փաշինյանն ու իր թիմն ակնհայտ հիստերիայի մեջ են: Նրանք արդեն սկսել են հայ հանրության նկատմամբ տեղեկատվական տեռոր իրականացնել: Եթե առաջ խոսում էին Ռուսաստանից կառավարվող հիբրիդային պատերազմի մասին եւ Արեւմուտքին էին դիմում, որ օգնի այդ պատերազմը հաղթահարելուն ու վերարտադրվելուն, ապա հիմա ուղղակի սեփական ժողովրդին են շանտաժի ենթարկում, թե սեպտեմբերին արյունահեղություն կլինի, պատերազմ կսկսվի: Եվ այնքան անհավասարակշիռ վիճակում է վարչապետ-վարչապետի թեկնածուն, որ հանրային վայրում, ուղիղ եթերում հարձակվում է Արցախի հերոսի դստեր վրա, նրան արգելում անգամ երազել Արցախ վերադառնալու մասին, ապա՝ օրվա վերջում նախ հրաժարվում է իր խոսքերից, ինչը, որոշ մասնագետների հավաստմամբ, բնորոշ է շիզոֆրենիայով տառապողներին, ապա, տեսնելով աղմուկը, ներողություն է խնդրում արցախցի կնոջից, որի երեխայի ներկայությամբ ասել էր, թե արցախցիները «փախածներ» են:

- ՔՊ-ն դրսեւորում է տրիվիալ հիստերիկ վարքագիծ, դրանով էլ պայմանավորված, կուսակցության քարոզարշավի մեկնարկը տվել են շատ ավելի վաղ, քան սովորաբար անում են: Սրանով է պայմանավորված նաեւ դեմոնստրատիվ ուրախության դրսեւորումը: Երեկ Փաշինյանը նույնիսկ հայտարարեց, թե Ռուբեն Ռուբինյանն արգելել է, որ ավտոբուսի մեջ պարեն, քանի որ այն հանգեցնում է բացասական ֆիդբեքերի: Ինչքան էլ այս մարդիկ փորձում են ցույց տալ, որ շատ ուրախ են, անհոգ են, սակայն իրականությունը լրիվ այլ է, նրանք ուղղակի փորձում են այդպես ցուցադրել, եւ վերջ: Փաշինյանը, խոսելով այն մասին, որ իրեն հարկավոր է 60 տոկոս ձայն, այդ հայտարարությամբ հուշում է, որ անցողիկ շեմը հազիվ է հաղթահարելու, ինչի մասին ինքը տեղյակ է բոլորից լավ: Այսօրվա դրությամբ ԱԺում մեծամասնություն ունենալն այս թիմի համար երեւակայական մի բան է, որքան, օրինակ, ճապոնացիների համար եվրոպացի դառնալը....

- Պատերազմով սպառնալը ճե՞ւս դրանով է պայմանավորված: Փաշինյանը կիրակի օրը հայտարարեց, որ եթե իրեն չընտրեն՝ ՔՊ-ն բացարձակ մեծամասնություն չլինի, ապա սեպտեմբերին հուժկու պատերազմ է սպասվում:

- Այո, շանտաժն այստեղ պարտադիր բաղկացուցիչ մաս է: Նիկոլ Փաշինյանն ակտիվ կիրառում է շանտաժ: Սրանից առաջ գեւորգպապոյաններն էին այդ մասին խոսում, սակայն կիրակի օրը Փաշինյանն իր բերանով, շատ կատեգորիկ հայտարարեց այն մասին, որ եթե ինքը չլինի, սեպտեմբերին մեծ պատերազմ է տեղի ունենալու: Այս հայտարարությունից կարող ենք մի քանի եզրահանգում անել: Կամ նա սովորականի պես ավանտյուրա է անում, ինչն իրեն շատ հատուկ է, եւ փորձում է ավանտյուրային հայտարարություններով վախեցնել ընտրողներին: Եկեք ճիշտ հասկանանք՝ պատերազմի շանտաժից հետո ընտրողը, ըստ Նիկոլի, պետք է վախենա եւ իրեն քվե տա, ինչը ոչ թե ցանկության դրսեւորում է, այլ՝ շանտաժից դրդված քայլ: Նիկոլ Փաշինյանը պատրաստ է, որ անգամ մարդիկ իրեն ատեն, սակայն վախից քվե տան իրեն: Այդ մարդը սա է: Այս տեսակն է: Հոգեբանական ռակուրսից մենք տեսնում ենք հիստերիայի մեջ ընկած Փաշինյանին, որը ցուցաբերում է շանտաժային մոտեցում: Այս մասին է փաստում նաեւ նրանց խիստ անհավասարակշիռ վարքագիծը, ինչը եւ դրսեւորվեց կիրակի օրը՝ մի քանի դրվագով: Մի տեղ՝ բակում մի տղամարդու հետ էին վիճում ու վիրավորում, մի տեղ՝ մետրոյում վիրավորեցին Արցախի հերոսի դստերը, իմիջիայլոց, ոչ մի կապ չունի, թե ով էր այդ կինը, ում դուստրն էր: Իհարկե, հերոսի դուստր լինելն իրավիճակն ավելի էպիկ է դարձնում, սակայն եթե անգամ իր «տիգրովկայով» համակիրներից մեկը լիներ՝ հերոսի դստեր փոխարեն, չէր կարելի նման կերպ խոսել, այդ դրսեւորումը խիստ անընդունելի է: Այն հիստերիկ դրսեւորում էր, այլ ոչ թե հավասարակշռված լիդերի: Հարց ընտրողներին. եթե մի մարդ մետրոյում՝ երեխայի ներկայությամբ, կնոջ հետ խոսում է նման բառապաշարով՝ երեխայի համար ստեղծելով տրավմատիկ հոգեվիճակ, կարո՞ղ է արդյոք հավասարակշիռ ձեւով երկիր ղեկավարել: Ի դեպ, նրա ներողությունը ոչ մի կոպեկի արժեք չունի: Այն հոգեբանական տրավման, որ նա հասցրեց այդ մարդկանց, չի անցնելու: Եվ այդ տրավման ոչ միայն ստացավ տվյալ արցախցի կինը, այլեւ՝ ողջ հասարակությունը:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՇԱՆՏԱԺԻ ՏԱՐՐ ՏԵՍՆՈՂԻՄ ԵՄ՝ ՈՉ, ՉԵՄ ՏԵՍՆՈՒՄ, ԻՆՉՈՂԻ ԵՆՔ ԱՆՈՒՄ՝ ԼԱՎ ԵՆՔ ԱՆՈՒՄ

ՍԴՊ

Ութ տարվա ընթացքում հինգ պատերազմ եւ ռազմական գործողություն բերած իշխանության ներկայացուցիչները, շարունակելով երկրորդել պետության թիվ մեկ պատուհասին, սեփական ժողովրդին շանտաժի են ենթարկում, պատերազմի սպառնալիքով ահուսարսափի մեջ պահում: 2020-ին Տավուշում հուլիսյան մարտեր, սեպտեմբերին սկսված 44-օրյա պատերազմ, 2021-ի նոյեմբերին Գեղարքունիքի նկատմամբ ռազմական էսկալացիա, 2022 թվականի սեպտեմբերին ջերմուկյան մարտեր եւ վերջապես Արցախի հանձնում՝ 2023-ի սեպտեմբերին:

Զրոյական կետից բանակցություններ սկսած Նիկոլ Փաշինյանն ու իր խմբակը, որ Արցախն ու ՀՀ սուվերեն տարածքները հանձնելուց հետո 2024-ին էլ պատերազմի սպառնալիքով՝ առանց մի կրակոցի թշնամուն հանձնեցին տավուշյան տարածքները, այսօր իսկական հիբրիդային պատերազմ են իրականացնում իրենց իսկ ժողովրդի դեմ, որի նպատակն է վերարտադրվել հունիսյան ընտրություններում, իրենց՝ պատերազմ ու աղետ բերողներին, ներկայացնել որպես «խաղաղության կուսակցություն», ընդդիմադիրներին՝ «պատերազմի»:

Փաշինյանը նախօրեին կրկին մարզերում էր, ապա Երեւանում քարոզարշավ իրականացրին, որի ժամանակ կրկնեց օրեր առաջ արած պնդումը՝ ավելի համոզիչ տոն հաղորդելով իր խոսքին. «Լինելու ա պատերազմ սեպտեմբերին ու աղետաբեր պատերազմ, եթե ՔՊ-ն սահմանադրական մեծամասնություն չստանա»: Ինչպես ասում են՝ գողն առաջինն է գոռում՝ բռնեք գողին: Այս թեմայի շուրջ իշխանականների վերջին օրերի մեկնաբանությունները մատնում են, որ իշխանության տեղն այնքան նեղն է, որ մեկ կենտրոնում մշակված կեղծ լոզունգներով որոշել են ժողովրդին վախեցնելով՝ կրկին գողանալ մարդկանց քվեն, ինչպես արեցին 2021 թվականին: Եվ այդ նպատակով էլ անընդհատ կրկնում են այն ոչնչով չհիմնավորված թեզը, թե պատերազմ է լինելու, եթե մեզ չընտրեք: Սա ամենաստոր քայլն է, որ փորձում են իրականացնել՝ անտեղյակ ու պատերազմից վախը չհաղթահարած ժողովրդի ուղեղները լվանալով եւ փորձելով ազդել տատանվող զանգվածի վրա:

Երեկ էլ տեռորի եւ խոսքով ահաբեկիչների դերը ստանձնել էին նրա կառավարության անդամները՝ արդարադատության եւ արտաքին գործերի նախարարները: Արարատ Միրզոյանը, թվում էր, իր զուսպ եւ հավասարակշիռ պահվածքով տարբերվում է Նիկոլ Փաշինյանից, բայց արի ու տես՝ այսօր ՔՊ-ում «բոլորս Նիկոլ ենք, բոլորս տեռորիստ ենք» կարգախոսն է գործում, եւ բոլորն են նախընտրական որսի դուրս եկել ու ոչ մի միջոցի մեջ խտրականություն չեն դնում: Ընդորում՝ Սրբուհի Գալյանը խոստովանեց, որ Փաշինյանի այդ հայտարարությունը քաղաքական է, եւ իրենք ընդամենը ընդդիմադիրների խոսույթից ենթադրություններ անելով պնդում են պատերազմի մասին պնդումներ անում. «Խոսքը խաղաղության, հաստատված խաղաղության եւ այն փայփայելու մասին է, իսկ այն հայտարարությունները, որոնք հնչում են ընդդիմադիր դաշտից, մեր ընկալմամբ՝ չունեն այլ որակում, քան խաղաղությունը վտանգող: Հետեւաբար, քաղաքական դեմքերն ազատ են՝ անելու քաղաքական հայտարարություններ: Վարչապետը նաեւ շարունակել է, որ խաղաղությունը ռեւիզիայի ենթարկելը պատերազմի դուռ բացելու վտանգ է պարունակում: Այո, դա այդպես է՝ մեր ընկալմամբ»:

«Վարչապետը սեպտեմբեր ամիսը պայմանական է ասել՝ նկատի ունենալով ընտրություններից կարճ ժամանակ անց, իսկ որ նման հեռանկար կարող է լինել, դա միանշանակ է»,- իր հերթին հայտարարեց Արարատ Միրզոյանը: «Ռոպեներ առաջ, ԱԺ հանձնաժողովում նստած, խոսում էինք այդ թվում այն ընդդիմադիր պատգամավորների հետ, որոնց գաղափարախոսությունն այն է, նաեւ խորհրդարանում չգտնվող առանձին ընդդիմադիր շրջանակների, որ գրեթե բոլոր հարեւան երկրների հետ տարածքային խնդիրներ կան, տարածքային պահանջներ ու հավակնություններ ունենք: Բառացի մեջբերում եմ այդ մտքի կրող մի քաղաքացու խոսքը՝ «Էս Հայաստանը մեզ պետք չի», եւ քարտեզը գետնին գցելը: Ակնհայտ է, որ եթե այս մտայնությամբ մարդիկ իշխանության գան, անմիջապես խնդիր է առաջանալու հարեւանների հետ: Հաշվի առնելով, թե այս օրերին երկրներն ինչ մեթոդաբանությամբ են փորձում հիմնախնդիրները լուծել, շատ մեծ հավանականությամբ՝ Հայաստանը կկանգնի նոր պատերազմի առաջ»,- ասաց նա:

Դիտարկմանը, որ «կամ մենք, կամ պատերազմը» միտքը շանտաժի է նման, ԱԳ նախարարն ասաց. «Շանտաժն այստեղ ո՞րն է: Մենք առաջարկում ենք խաղաղություն, այլ պայմաններում, հավատացեք, մեր խորը համոզմամբ, Հայաստանի Հանրապետության ոչ թե հաջողությունը, ոչ թե զարգացումը, այլ որպես անկախ պետություն գոյությունն ինքնին կհայտնվի մեծ կասկածի տակ: Եվ կա զուգահեռ առաջարկը, որ չէ՝ այս Հայաստանը մեզ ընդհանրապես պետք չի, մենք թքած ունենք սրա վրա, մեզ պետք է չգիտեմ ինչ Հայաստան: Սա շանտաժ չի, սովորական բան է»:

Հարցին՝ արդյոք չի՞ ստացվում, որ իրենք կանխակալ կերպով մյուս ուժերին կոչում են պատերազմի ուժեր, Արարատ Միրզոյանը պատասխանեց. «Իրենք են ասում: Սա քաղաքական անճարակության դրսեւորում է այն ուժերի կողմից, որոնք մեզ մեղադրում են նրանում, որ մենք ասում ենք, որ մենք խաղաղության կուսակցությունն ենք, իսկ մյուսների ասածն այնքան անհեռանկար է եւ վտանգավոր, որ հանգեցնելու է պատերազմի: Սա այնքան ճիշտ է եւ անխոցելի, որ գալիս մեզ ասում են՝ լավ, էլի, էդ մի ասեք, որովհետեւ ընտրական մրցակցություն», ընդդիմադիրներին՝ «պատերազմի»:

Փաշինյանը նախօրեին կրկին մարզերում էր, ապա Երեւանում քարոզարշավ իրականացրին, որի ժամանակ կրկնեց օրեր առաջ արած պնդումը՝ ավելի համոզիչ տոն հաղորդելով իր խոսքին. «Լինելու ա պատերազմ սեպտեմբերին ու աղետաբեր պատերազմ, եթե ՔՊ-ն սահմանադրական մեծամասնություն չստանա»: Ինչպես ասում են՝ գողն առաջինն է գոռում՝ բռնեք գողին: Այս թեմայի շուրջ իշխանականների վերջին օրերի մեկնաբանությունները մատնում են, որ իշխանության տեղն այնքան նեղն է, որ մեկ կենտրոնում պայքարում մենք կարող է այդքան հաջողակ չլինենք»:

Ինչո՞ւ են որոշել, որ քաղաքական հակառակորդները պատերազմ են քարոզում, գուցե նրանք բանակցությունները նկատի ունեն եւ ավելի լավ են կողմնորոշվում աշխարհաքաղաքական իրավիճակում, քան դուք, իսկ դուք պատերազմով եք սպառնում: Նախարարի արձագանքն այսպիսին էր. «Դա մեր քաղաքական իրավունքն է: Ես այդտեղ շանտաժի տարր տեսնո՞ւմ եմ՝ ոչ, չեմ տեսնում: Ինչո՞ւ ենք անում՝ լավ ենք անում. դա մեր քաղաքական առաջարկն է, եւ մենք օրենք չենք խախտում»:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ՍԿՍԵԼ ԵՆ ՀԱՍԿԱՆԱԼ, ՈՐ ԲՈՒՄԵՐԱՆԳԸ ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ Է ԻՐԵՆՑ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

Մի իշխանություն, որն ամենից շատն է ատելության խոսք տարածում, որոշել է պայքարել ատելության խոսքի դեմ: Ժողովրդական մի լավ առած կա. «Առաջ դու գողին բռնիր, քանի գողը քեզ չի բռնել»: Այս խոսքը տիպիկ բնութագրում է ՔՊ-ական ռեժիմին: Միայն նրանց պատկանող ֆեյքերի գրառումները եւ «լրատվամիջոցների» վերնագրերն ընթերցելով կարելի է հասկանալ, թե Հայաստանում ովքեր են համար մեկ ատելություն տարածողները: Մենք գրել էինք, որ Փաշինյանի հրահանգով՝ կառավարությունում ակտիվ աշխատում են նոր օրինագծի վրա, որով պատրաստվում են պայքարել «ատելության խոսքի» դեմ: Այն ընդդիմության եւ ԶԼՄ-ների նկատմամբ հերթական զսպաշապիկը կլինի: Ընդ որում, այլ ուղղություններով էլ են աշխատում՝ օրինակ, ֆինանսական թափանցիկություն ապահովելու, հավատարմագրումից զրկելու մեխանիզմներ ներդնելու եւ անգամ ԶԼՄ-ներ փակելու պլաններ ունեն, բայց դրանք կիրականացվեն, եթե հունիսի 7-ին վերարտադրվեն: Ի դեպ, այս մշակումներին ներգրավված են ԱԺ գիտության, կրթության հանձնաժողովը, որի նախագահը նախկին լրագրող Սիսակ Գաբրիելյանն է, «Հանրօգուտ մեդիամիջավայր» հիմնադրամը, որի տնօրենը եւս նախկին լրագրող է՝ Վահագն Թեւոսյանը, եւ նախարար Սրբուհի Գալյանի խորհրդական Լյովա Սարգսյանը:

Արդեն «Ատելության խոսքի դեմ պայքարի նոր կառուցակարգերի ներդրման» վերաբերյալ տեղեկանք է կազմվել, ըստ որի՝ քաղաքացիական եւ վարչական պատասխանատվություն է սահմանվելու՝ փոփոխություններ կկատարվեն օրենսգրքերում, մեծ տուգանքներ կսահմանվեն՝ նվազագույն աշխատավարձի 3000-ապատիկից մինչեւ 6000-ապատիկի չափով: Փաստաբան **Հայկ Ալումյանը**, «Հրապարակի» հետ զրույցում անդրադառնալով թեմային, նկատեց. «Եթե ատելության խոսքը բառի բուն իմաստով հասկանանք, ապա, իհարկե, պետք է պայքարել ատելության խոսքի դեմ, եւ այս իմաստով ցանկացած քայլ ողջունելի է, այլ հարց է, որ ատելության խոսքն օրվա իշխանության գլխավոր գործիքներից էր 2018-ին՝ իշխանափոխության հասնելու ժամանակ: Ատելության խոսքի միջոցով նրանք կարողացան բոլորի բերանը փակել, բոլորս ենք հիշում, թե ինչպես էին համացանցում իրենց կարծիքին դեմ ցանկացած կարծիքի արձագանքում ատելության խոսքով: Եթե մի քանիսն այդ շրջանում փորձում էին կասկածի տակ դնել Նիկոլ Փաշինյանի մարդկային որակները կամ նրա ունակությունները, հեղափոխական գաղափարախոսությունները, անմիջապես հարձակում էին գործում ամենակեղտոտ ու եղկելի բառապաշարով, հայհոյանքներով: Նրանց լկտիությանն ու բառապաշարին չկար սահման, եւ դա հանդիսացավ գործիք, որպեսզի ողջ լրատվական դաշտը հեղեղվի իրենց օգտին հրապարակումներով: Հիմա, երբ արդեն իրենք են դարձել ատելության խոսքի հիմնական հասցեատերը, սկսել են հասկանալ, որ բումերանգը վերադառնում է իրենց ուղղությամբ: Վախենում եմ, որ Եվրոպայից եկող գումարները, որոնց անունը դրել են «հիբրիդային պատերազմի» դեմ պայքար, ուղղեն մարդկանց ազատ խոսքը լռեցնելու գործին, մարդկանց բերանը փակելուն.... Նիկոլ Փաշինյանը կիրակի օրը եւս մի արցախցի կնոջ հասցեին ատելության խոսք տարածեց, սակայն ներողություն խնդրեց, փորձեց շտկել իրավիճակը, դա փաստեց այն մասին, որ կան իրավիճակներ, երբ այդ մարդը չի կարողանում տիրապետել ինքն իրեն: Բայց ես ուզում եմ ասել, որ՝ ինչ-ինչ, սակայն խոսքի հանդեպ Եվրոպական դատարանը շատ մանրամասն ու հօգուտ խոսքի ազատության է աշխատում: Եվրոպական դատարանի համար հստակ է, որ իշխանությունները պետք է լոյալ գտնվեն իրենց ուղղված քննադատության հանդեպ, կան չափանիշներ, սահմաններ, սակայն իշխանությունները պետք է իրենց ուղղված քննադատության նկատմամբ լինեն հանդուրժող: Անգամ երբեմն ոչ պարկեշտ քննադատության պարագայում պետք է այդպես լինի: Հայաստանի դատարաններն այս առումով պարտավոր են առաջնորդվել Եվրոպական դատարանի սահմանած չափանիշներով, վճիռներով: Իշխանությունների համար հեշտ չի լինելու ԶԼՄ-ների բերանը փակել, խոսքը նաեւ անհատ անձանց մասին է, սակայն նման փորձեր արվում են, եւ դա ակնհայտ է: Ասեմ, որ այդ փորձերը պայմանավորված նե նրանով, որ քչերն են հետեւողական, քչերն են դատարան դիմում եւ փորձում իրենց իրավունքները պաշտպանել»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀՌՀ

Հիշխանությունների ձեռքի խամաճիկը դարձած հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովը, որը «հեղափոխական իշխանությունների» իշխանավարման տարիներին մի քանի ընդդիմադիր հեռուստաալիքի է զրկել եթերից, օրերս իր 25 ամյակն էր տոնում: Եվ դրա կապակցությամբ հայտարարել է, որ աննախադեպ ձեռքբերում ունի, այն է՝ անկախ է: Մարտի 20-ին կայացել է հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովի ձեւավորման 25-ամյա հոբելյանին նվիրված հանդիսավոր միջոցառում, որին մասնակցել են հեռուստառադիոընկերությունների, ցանցային օպերատորների, հեղինակազորված ընկերությունների ղեկավարները, ինչպես նաեւ՝ օրենսդիր, գործադիր, սահմանադրական մարմինների, ՀՌ-ում գործող դեսպանությունների, միջազգային եւ այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Դահլիճ, երգահան, զոհվածի հայր **Դավիթ Ամալյանից**, որը երկար տարիներ եղել է ՀՌՀ անդամ, հետաքրքրվեցինք՝ ՀՌՀ 25 ամյակին նվիրված միջոցառմանը հրավիրված եղե՞լ է, թե՞ ոչ, ապա հարցրինք՝ արդյոք այսօրվա ՀՌՀ-ն ազա՞մ է, թե՞ ոչ: Դավիթ Ամալյանն ասաց. «Հրավիրված չեմ եղել, սակայն առանձնապես չեմ հուզվել այդ հանգամանքից, շնորհակալ եմ, ինչ վերաբերում է նրանց, ես նրանց հետ աշխատել եմ եւ, ի տարբերություն հակառակ թեւի, ես իրենց նման գործ տվող չեմ: Ես նրանց հետ ինչ-որ մի շրջանում աշխատել եմ, չեմ ուզում շատ հարցերի անդրադառնալ, սակայն երբ լսեցի նրանց հայտարարությունը, ակամայից հիշեցի հետեւյալ անեկդոտը. «Հարցնում են մեկին՝ ձեր մամուլն ազա՞մ է, թե՞ ոչ: Դավիթ Ամալյանն ասաց. «Հրավիրված չեմ եղել, սակայն առանձնապես չեմ հուզվել այդ հանգամանքից, շնորհակալ եմ, ինչ վերաբերում է նրանց, ես նրանց հետ աշխատել եմ եւ, ի տարբերություն հակառակ թեւի, ես իրենց նման գործ տվող չեմ: Ես նրանց հետ ինչ-որ մի շրջանում աշխատել եմ, չեմ ուզում շատ հարցերի անդրադառնալ, սակայն երբ լսեցի նրանց հայտարարությունը, ակամայից հիշեցի հետեւյալ անեկդոտը. «Հարցնում են մեկին՝ ձեր մամուլն ազա՞մ է արդյոք, նա պատասխանում է՝ եթե պապուլը տանը չի, մամուլն ազատ ա»: Ինչպես բոլոր համակարգերը, այնպես էլ ՀՌՀ-ն չի կարող լինել ազատ, սրանց հասկացած ազատությունը չունի արժեք»:

Հանրային հեռարձակողի խորհրդի նախկին անդամ, գրող, հրապարակախոս **Մերուժան Տեր-Գուլանյանից** նույնպես հարցրինք՝ մասնակցե՞լ է ՀՌՀ 25 ամյակին նվիրված միջոցառմանը եւ ի՞նչ կարծիք ունի այդ կառույցի մասին, արդյո՞ք այն ազատ է ու անաչառ: Տեր-Գուլանյանն ասաց. «Ես հեռուստատեսության, ռադիոյի եւ, առհասարակ, մամուլի մի շարք օրենքների հեղինակ եմ, վատ չէր լինի, որ ինձ էլ հիշեին, բայց չեն հիշել, ինչեւէ: Ես, անկեղծ ասած, հայկական TV-ներին չեմ հետեւում, քանի որ նրանց մեծ մասն ուղղակիորեն ազատ չէ, սուտ են խոսում, ոչ մի ազատություն: Ազատ հեռուստաալիք ժամանակին «ԱՐ» հեռուստաընկերությունն էր, ներողություն եմ խնդրում, որ իմ ստեղծած հեռուստատեսության վրա եմ օրինակը բերում, սակայն եթե ինձ հարցնում եք, թե ազատ հեռուստատեսությունը որն է, ես էլ պատասխանում եմ: Իհարկե, մենք մեր ազատության համար պատժվեցինք, դա չէ խնդիրը, սակայն ազատ լինել՝ նշանակում է ազատ մտածել, ազատ հաղորդումներ եթեր հեռարձակել եւ հասկանալ, թե որ ուղղությամբ ես գնում: Մի երկրում, որտեղ խոսքի համար մարդկանց են դատում, ինչպե՞ս կարող է լինել ազատ ՀՌՀ: Ինչո՞ւ են դատում Սամվել Կարապետյանին, որովհետեւ նա ասել է՝ «մենք էլ մեր ձեւով կմասնակցենք»: Նա ընդամենը մի անմեղ խոսք է ասել, որի համար բանտարկվել է: Կամ, օրինակ, դատի են տվել «Հրապարակ» օրաթերթին: Ես ձեր թերթի երդվյալ ընթերցողն եմ ու չեմ հիշում մի տող, որի համար արժեր դատ բացել: Ես արդեն վաղուց սկզբունքորեն դադարել եմ հետեւել Հ1-ին, հենց ազատության բացակայության պատճառով: Եկեք չմոռանանք նաեւ, որ մի շարք հեռուստաալիքներ են փակվել, անգամ «Շողակաթի» նման TV-ն, որը ո՛չ ընդդիմադիր էր, ո՛չ էլ կապ ուներ ընդդիմության հետ: Հոգեւոր ալիք էր, ինչո՞ւ այն զրկեցին եթերից, էլ ի՞նչ ազատության մասին է խոսքը, լավ չեմ հասկանում, ինչեւիցե, նախընտրական շրջան է, ամպագոռգոռ հայտարարություններ են անում, սակայն ես ամաչում եմ իրենց համար: Ամոթ է, կարիք չկա նման հայտարարություններ անելու, բոլորս ենք տեսնում, թե Հայաստանում խոսքի ազատությունն ինչ վիճակում է գտնվում, ներառյալ TV-ներն ու ռադիոն: Իշխանությունը հայհոյում է, սակայն ուրիշներին են դատում՝ խոսքի համար: Արսեն Թորոսյանը մի անգամ Ազգային ժողովի ամբիոնից բոլորիս մայր, կին, աղջիկ հայհոյեց, ո՞վ նրան պատասխանատվության ենթարկեց՝ ոչ ոք: Սակայն դրա փոխարեն եպիսկոպոսների են դատում, բարերարների են դատում, եւ այսպես շարունակ»:

Մի երկրում, որտեղ խոսքի համար մարդ են դատում, ինչպե՞ս կարող է լինել ազատ ՀՌՀ

Էջը՝
Հայկ
ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

«Այսօր մենք՝ բոլորս, նկատում ենք, որ Հանձնաժողովը փորձում է վերահմաստավորել իր գործունեությունը, իր առաքելությունը, եւ մենք կարծում ենք, որ մեզ մոտ ինչ-որ չափով դա ստացվում է: Եվ այդ պատճառով 25 տարին մենք եզրագիծ չենք համարում: Մենք գտնում ենք, որ ճանապարհի կեսին ենք եւ բավականին մեծ ծավալի աշխատանք ունենք, քանզի չի կարող լինել հասարակության, մեդիայի վստահություն, եթե նրանք համոզված չլինեն քո որոշումների անաչառության եւ անկախության մեջ»,- ողջույնի իր խոսքում շեշտել է Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովի նախագահ Տիգրան Հակոբյանը: Նրա դիտարկմամբ՝ ամենակարեւոր ձեռքբերումն այսօրվա ՀՌՀ-ի անկախ կարգավիճակն է: «Մենք կարողանում ենք ընդունել որոշումներ, որոնք գուցե այս կամ այն քաղաքական ուժին, իշխանություններին, անհատներին հաճո չլինեն: Բայց դրանք առաջինը ծառայում են հանրային շահին, օբյեկտիվ են, անկողմնակալ եւ զերծ են դրսի ճնշումներից: Սա ամենամեծ նվաճումն է»,- ասել է նա՝ առաջիկա անելիքների շարքում կարեւորելով տեսալսողական մեդիայի ամբողջ դաշտը կարգավորելու առաջնահերթությունը:

Երգիչ, երգահան, զոհվածի հայր **Դավիթ Ամալյանից**, որը երկար տարիներ եղել է ՀՌՀ անդամ, հետաքրքրվեցինք՝ ՀՌՀ 25 ամյակին նվիրված միջոցառմանը հրավիրված եղե՞լ է, թե՞ ոչ, ապա հարցրինք՝ արդյոք այսօրվա ՀՌՀ-ն ազա՞մ է, թե՞ ոչ: Դավիթ Ամալյանն ասաց. «Հրավիրված չեմ եղել, սակայն առանձնապես չեմ հուզվել այդ հանգամանքից, շնորհակալ եմ, ինչ վերաբերում է նրանց, ես նրանց հետ աշխատել եմ եւ, ի տարբերություն հակառակ թեւի, ես իրենց նման գործ տվող չեմ: Ես նրանց հետ ինչ-որ մի շրջանում աշխատել եմ, չեմ ուզում շատ հարցերի անդրադառնալ, սակայն երբ լսեցի նրանց հայտարարությունը, ակամայից հիշեցի հետեւյալ անեկդոտը. «Հարցնում են մեկին՝ ձեր մամուլն ազա՞մ է արդյոք, նա պատասխանում է՝ եթե պապուլը տանը չի, մամուլն ազատ ա»: Ինչպես բոլոր համակարգերը, այնպես էլ ՀՌՀ-ն չի կարող լինել ազատ, սրանց հասկացած ազատությունը չունի արժեք»:

Հանրային հեռարձակողի խորհրդի նախկին անդամ, գրող, հրապարակախոս **Մերուժան Տեր-Գուլանյանից** նույնպես հարցրինք՝ մասնակցե՞լ է ՀՌՀ 25 ամյակին նվիրված միջոցառմանը եւ ի՞նչ կարծիք ունի այդ կառույցի մասին, արդյո՞ք այն ազատ է ու անաչառ: Տեր-Գուլանյանն ասաց. «Ես հեռուստատեսության, ռադիոյի եւ, առհասարակ, մամուլի մի շարք օրենքների հեղինակ եմ, վատ չէր լինի, որ ինձ էլ հիշեին, բայց չեն հիշել, ինչեւէ: Ես, անկեղծ ասած, հայկական TV-ներին չեմ հետեւում, քանի որ նրանց մեծ մասն ուղղակիորեն ազատ չէ, սուտ են խոսում, ոչ մի ազատություն: Ազատ հեռուստաալիք ժամանակին «ԱՐ» հեռուստաընկերությունն էր, ներողություն եմ խնդրում, որ իմ ստեղծած հեռուստատեսության վրա եմ օրինակը բերում, սակայն եթե ինձ հարցնում եք, թե ազատ հեռուստատեսությունը որն է, ես էլ պատասխանում եմ: Իհարկե, մենք մեր ազատության համար պատժվեցինք, դա չէ խնդիրը, սակայն ազատ լինել՝ նշանակում է ազատ մտածել, ազատ հաղորդումներ եթեր հեռարձակել եւ հասկանալ, թե որ ուղղությամբ ես գնում: Մի երկրում, որտեղ խոսքի համար մարդկանց են դատում, ինչպե՞ս կարող է լինել ազատ ՀՌՀ: Ինչո՞ւ են դատում Սամվել Կարապետյանին, որովհետեւ նա ասել է՝ «մենք էլ մեր ձեւով կմասնակցենք»: Նա ընդամենը մի անմեղ խոսք է ասել, որի համար բանտարկվել է: Կամ, օրինակ, դատի են տվել «Հրապարակ» օրաթերթին: Ես ձեր թերթի երդվյալ ընթերցողն եմ ու չեմ հիշում մի տող, որի համար արժեր դատ բացել: Ես արդեն վաղուց սկզբունքորեն դադարել եմ հետեւել Հ1-ին, հենց ազատության բացակայության պատճառով: Եկեք չմոռանանք նաեւ, որ մի շարք հեռուստաալիքներ են փակվել, անգամ «Շողակաթի» նման TV-ն, որը ո՛չ ընդդիմադիր էր, ո՛չ էլ կապ ուներ ընդդիմության հետ: Հոգեւոր ալիք էր, ինչո՞ւ այն զրկեցին եթերից, էլ ի՞նչ ազատության մասին է խոսքը, լավ չեմ հասկանում, ինչեւիցե, նախընտրական շրջան է, ամպագոռգոռ հայտարարություններ են անում, սակայն ես ամաչում եմ իրենց համար: Ամոթ է, կարիք չկա նման հայտարարություններ անելու, բոլորս ենք տեսնում, թե Հայաստանում խոսքի ազատությունն ինչ վիճակում է գտնվում, ներառյալ TV-ներն ու ռադիոն: Իշխանությունը հայհոյում է, սակայն ուրիշներին են դատում՝ խոսքի համար: Արսեն Թորոսյանը մի անգամ Ազգային ժողովի ամբիոնից բոլորիս մայր, կին, աղջիկ հայհոյեց, ո՞վ նրան պատասխանատվության ենթարկեց՝ ոչ ոք: Սակայն դրա փոխարեն եպիսկոպոսների են դատում, բարերարների են դատում, եւ այսպես շարունակ»:

Հուսով եմ՝ այդ նախագիծը կյանքի չի կոչվի

Նախկին խմբագիր, այժմ վարչապետ Փաշինյանը չի հանդարտվում: Նա ատում է ազատ խոսքը, ատում է բոլոր նրանց, ովքեր չեն կիսում իր տեսակետը: Կորցնում է ինքնատիրապետումը փողոցում կամ մետրոյում, երբ ինչ-որ մեկը մերժում է իր գաղափարները: Թվում է, թե այս իշխանությունը, որը բաղկացած է նախկին լրագրողներից, ամենաշատը պետք է կարեւորեր խոսքի ազատությունը, սակայն մենք ունենք աննախադեպ քաղաքական բանտարկյալներ՝ խոսքի համար, դատվող լրագրողներ ու խմբագիրներ՝ ազատ խոսքի համար, եւ այժմ էլ ԶԼՄ-ների համար հերթական զսպաշապիկն են կարում, նոր նախագիծ են մշակել: «Հրապարակը» մարտի 21-ին գրել էր, որ Փաշինյանի հրահանգով՝ կառավարությունում ակտիվ աշխատում են նոր օրինագծի վրա, որով պատրաստվում են պայքարել «ատելության խոսքի» դեմ: Այն ընդդիմության եւ ԶԼՄ-ների նկատմամբ հերթական զսպաշապիկը կլինի: Ընդ որում, այլ ուղղություններով էլ են աշխատում՝ օրինակ, ֆինանսական թափանցիկություն ապահովելու, հավատարմագրումից զրկելու մեխանիզմներ ներդնելու եւ անգամ ԶԼՄ-ներ փակելու պլաններ ունեն, բայց դրանք կիրականացվեն, եթե հունիսի 7-ին վերարտադրվեն: Ի դեպ, այս մշակումներին ներգրավված են ԱԺ գիտության, կրթության հանձնաժողովը, որի նախագահը նախկին լրագրող Սիսակ Գաբրիելյանն է, «Հանրօգուտ մեդիամիջավայր» հիմնադրամը, որի տնօրենը եւս նախկին լրագրող է՝ Վահագն Թեւոսյանը, եւ նախարար Սրբուհի Գալյանի խորհրդական Լյովա Սարգսյանը: Արդեն «Ատելության խոսքի դեմ պայքարի նոր կառուցակարգերի ներդրման» վերաբերյալ տեղեկանք է կազմվել, ըստ որի՝ քաղաքացիական եւ վարչական պատասխանատվություն է սահմանվելու՝ փոփոխություններ կկատարվեն օրենսգրքերում, մեծ տուգանքներ կսահմանվեն՝ նվազագույն աշխատավարձի 3000-ապատիկից մինչեւ 6000-ապատիկի չափով:

Բայց խնդիրն անգամ տուգանքը չէ, այլ՝ այն, որ իշխանությունը որոշել է խեղաթյուրել ատելության խոսքի դեմ պայքարի գաղափարը եւ սահմանել է, որ նման խոսք է համարվում ոչ միայն ռասայական, ազգային, էթնիկ, կրոնական հայացքներով պայմանավորված անհանդուրժողականություն, ատելություն, խտրականություն քարոզող խոսքը, այլ նաեւ «քաղաքական հայացքներով» պայմանավորվածը, իսկ դա նշանակում է, որ կպատժվեն, օրինակ, ՔՊ-ի դեմ սոցցանցում գրառում անողները:

Մենք փորձեցինք մեկնաբանություն ստանալ նախ Վահագն Թեւոսյանից եւ նրան մի քանի հարց ուղղել, սակայն վերջինս կատեգորիկ հրաժարվեց խոսել թեմայի մասին՝ լսելով, որ «Հրապարակից» են իրեն հարց ուղղում: Այն «Հրապարակից», որտեղ ինքն առնվազն մեկուկես տարի ժամանակին աշխատել է:

Զրուցեցինք «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի հիմնադիր **Լիանա Դոյդոյանի** հետ: Վերջինս «Հրապարակի» հետ զրույցում խոսելով նախագծի մասին՝ ասաց. «Զուտ նախագծի մասին տեղեկությունից բացի, ուրիշ որեւէ տեղեկություն չկա, որեւէ տեքստ կամ որեւէ կոնկրետ հայտարարություն: Պարզապես ասվում է, որ օրենսդրական նախաձեռնության մասին քննարկումներ կան, որոնք ուղղված են ատելության խոսքի դեմ պայքարին: Ատելության խոսքը հստակ սահմանումներ ունի, առհասարակ, դրանք ամրագրված են միջազգային կարգավորումներով, Եվրոպական Միության համար էլ հստակ կան ձեւակերպումներ, թե որոնք են համարվում ատելության խոսք եւ որոնք են պարզապես համարվում վնասակար բովանդակություն ունեցող խոսքեր: Դրանք ունեն շատ նուրբ բաժանարար գծեր, սակայն խոսքը հիմնականում վերաբերում է ռասայական, կրոնական փոքրամասնություններին ուղղված ազատություններին, թիրախավորումը շատ կոնկրետ է, եւ Հայաստանում գործող օրենքներով այն ամրագրված է, այնպես չէ, որ սա մեզ համար նորություն ու հայտնագործում է: Քրեական օրենսգրքով էլ այն ամրագրված է, եւ չկա նոր օրենսդրության անհրաժեշտություն, հատկապես եթե խոսքը վերաբերում է, այսպես կոչված, ատելության խոսքին: Միջազգային կանոնագրերով եւ «ռեկոմենդացիաներով» այս խնդիրն իրականում կարգավորվում է, այլ հարց է, որ տեղի են ունենում ատելության կոչեր, թիրախավորումներ եւ այլն՝ կոնկրետ անձանց կողմից: Օրինակ՝ վարչապետի կիրակի օրվա հայտարարությունը՝ արցախցի կնոջն ուղղված, կոնկրետ թիրախավորում էր եւ հստակ ատելության խոսք: Նա թիրախավորեց կոնկրետ խմբերի՝ Արցախից տեղահանվածներին, եւ կոնկրետ վիրավորական, զրպարտչական եւ ատելության խոսք տարածեց, չենք խոսում այն մասին, որ այն տեղի ունեցավ երեխայի ներկայությամբ, որն էլ իր հերթին առանձին երեխայի իրավունքների պաշտպանությանն ուղղված խնդիր է: Հուսով եմ՝ այս նախագիծը կյանքի չի կոչվի, հուսով եմ, որ այն զուտ կմնա որպես նախագիծ, ոչ ավելին: Ինչ վերաբերում է այն կազմակերպություններին, որոնք աշխատում են այդ նախագծի վրա, պետք է նախ մշակման փուլում ներգրավեին շահագրգիռ կողմերին, պետք է ծավալվեին քննարկումներ, տեղի ունենար կարծիքների գնահատում: Պետք է հիմնավորումներ լինեն՝ կարծիքի գնահատման համար, սակայն չկա հիմնավորում, չկա առաջարկ, չգիտենք, թե ովքեր են մասնակցել այդ քննարկումներին եւ ինչ են քննարկել: Սակայն, որ չկա նման փոփոխության կարիք, դա փաստ է, ամբողջ աշխարհում այս հարցը լուծվում է ինքնաքննադատությամբ, էթիկայի կանոններով, ինչպես նաեւ՝ այլ օրենքներով»:

ԲՈՒՇՄԱ

ԵՐԿՈՒ՝ ԻՐԱՐ ՆՄԱՆ ՔԱՐՏԵԶԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Այն քարտեզից, որ ՔՊ-ի ռահվիրան խփել է դոշին ու ֆոֆռում է, ունի նաեւ Իլհամ Ալիեւը: Նույն քարտեզն է, պարզապես մեկի վրա գրված է «Իրական Հայաստան», իսկ մյուսի վրա՝ «Արեւմտյան Ադրբեջան»: Չեմ զարմանա, եթե մի օր պարզվի, որ այդ քարտեզ-կրծքանշանն արտադրվել է Ադրբեջանում եւ Հայաստան է ներկրվել ադրբեջանական բենզինի հետ: Իսկ թե ում է պատկանում այդ գաղափար-քարտեզի հեղինակային իրավունքը, կդժվարանամ ասել, քանի որ ուրվագիծն առաջինը հանրայնացրել է ոչ թե Ալիեւը, այլ՝ ՀՀ վարչապետը:

Ինչեւէ, խոսենք գործից: Հայ ժողովուրդը չի ընդունում իրեն պարտադրվող այդ ծաղրուծանակը, այդ թերմացքը, որ Իլհամ Ալիեւն ու ՀՀ վարչապետը փորձում են նրան հրամցնել որպես հայրենիք, իսկ ավելի ստույգ՝ որպես ժամանակավոր կացարան: Ռադ արա էդ քարտեզդ, դավաճան, հողատու, կապիտուլյանտ, Արցախ հանձնող… Ասում է հայ ժողովուրդը՝ չընդունելով ՀՀ վարչապետի «ընծան»: Փոխարենը, ադրբեջանցիները Ալիեւի ձեռքից սիրով են ընդունում «Արեւմտյան Ադրբեջան» գրությամբ այդ նույն քարտեզը: Ընդ որում, Ալիեւը նույնիսկ ստիպված չէ գյուղերն ու մետրոներն ընկնել, որ զոռով բաժանի դրանք: Այդ քարտեզներն ազատ վաճառվում են Բաքվի եւ մյուս քաղաքների բոլոր թերթի կրպակներում: Էլ ուր մնաց, որ Ալիեւը մի հատ էլ մետրո մտնի ու մատ թափ տա իր «հանճարեղ» գաղափարը չընդունող որեւէ մեկի վրա: Այդպիսիք Ադրբեջանում ուղղակի չկան: Կան, իհարկե, Հայաստանից փախած ադրբեջանցիներ, բայց Ալիեւը դրա համար նրանց չի մեղադրում: Ընդհակառակը, սիրաշահում է, գուրգուրում, որովհետեւ նրանք են իր հույսը, թե մի օր «Արեւմտյան Ադրբեջանն» իրականություն կդառնա:

Հիմա գանք մեր ոչխարներին: ՀՀ վարչապետը մի ժամանակ ասում էր՝ մենք պետք է գտնենք արցախյան հարցի այնպիսի լուծում, որ հավասարապես ձեռնտու լինի եւ ադրբեջանցիներին, եւ հայերին: Ասում էր՝ այս հարցով ես պատրաստ եմ խոսել նաեւ Ադրբեջանի ժողովրդի հետ: Սա 44-օրյա պատերազմից առաջ էր, այն օրերին, երբ ՀՀ վարչապետը, Ալիեւի հետ թեւ-թեւի տված, Մինսկի խումբն էր լուծարում: Ալիեւը, իհարկե, համեստորեն լռում էր եւ ըմբոշխնում ՀՀ վարչապետի այդ ցնդաբանությունները, որովհետեւ տեսնում էր, թե ինչպես է Հայաստանն իր վարչապետի «միամտության» եւ տգիտության շնորհիվ աստիճանաբար ընկնում ծուղակը: Հետո՝ պատերազմ, Հայաստանի խայտառակ պարտություն, հետո՝ Արցախի նոր՝ ստատուս-քվո… Դե արի, ՀՀ վարչապետ, ու խոսիր ադրբեջանցիների հետ, բացատրիր նրանց, թե որն է լինելու Արցախի հարցի լուծման այն տարբերակը, որ հավասարապես ընդունելի կլինի հայերի ու ադրբեջանցիների համար:

ՔՊ-ի դիրեկտորը, որ սովորություն ունի հաջորդ վայրկյանին հրաժարվել իր արածներից ու ասածներից, հիմա հիշում է պատերազմից առաջ արած իր հայտարարությունները, Շուշիում պարելը, Ստեփանակերտում ճոճղալը: Վստահ չեմ, որ հիշում է: Այլապես Պրահայում չէր հայտարարի, որ Արցախն Ադրբեջան է, որ իրեն արցախցին չի ընտրել, չի երաշխավորել բանակցել Արցախի հարցով: Եվ, ուրեմն, այսօր մեզ հրամցնում է այն քարտեզը, որը, ըստ իրեն եւ Ալիեւի, հավասարապես ընդունելի է հայերի ու ադրբեջանցիների համար: Խայտառակվել, պրծել է: Էլ բան չունի անելու: Հասարակական կարգով, որպես «ադրբեջանցի» ակտիվիստ, Ալիեւի քարտեզ-կրծքանշանն է բաժանում հայ ժողովրդին ու մի հատ էլ հոխորտում, երբ մարդիկ հրաժարվում են դա վերցնել:

Թե բա՝ ՔՊ-ի ներկուսակցական քարոզարշավ ենք անում: Լռ՞ւրջ: Այդ երբվանի՞ց են ներկուսակցական հարցերը դարձել ժողովրդական լայն քննարկման առարկա, որ չենք իմացել: Ինչ է՝ չէի՞ք կարող հավաքվել ձեր գրասենյակում ու ներկուսակցական հարցեր քննարկել: Օրինակ, այսպիսի «սուգուբը» ներկուսակցական հարց՝ «ինչ տեղի կունենա, եթե ՔՊ-ն իշխանություն չլինի»: Սա իսկապես նեղ կուսակցական հարց է, մինչդեռ ՔՊ-ի դիրեկտորը դրան «համահայկական» հնչեղություն է տվել եւ փորձում է նախընտրական տրամադրություններով համակված հանրությանը քարոզել, որ եթե ՔՊ-ն չընտրվի, պատերազմ կլինի: Ստում է, մանիպուլացնում է, խաբում է, արդարանում է իր կերած բողկերի համար… Իրենից առաջ էլ մեզ խաբել են, թե «խաղաղության կուսակցությունը գնում է, պատերազմի կուսակցությունն է գալիս»: Դրանից հետո 20 տարի եղավ միայն խաղաղություն, Հայաստան-Արցախը չունեցավ տարածքային որեւէ կորուստ, հզորացավ, դարձավ խաղաղության իսկական գործոն ողջ Հարավային Կովկասում: Խաղաղությունն այդպես է լինում: Հիմա սա եկել, Արցախը տվել է, Հայաստանի տարածքները դրել օկուպացիայի տակ, բանակը քայքայել, «Արեւմտյան Ադրբեջանի» կրծքանշանն էլ խփել դոշին ու ահաբեկում է հայ ժողովրդին՝ որ մեզ չընտրեք, պատերազմ կլինի: Այսինքն, այո, ներկուսակցական ֆինտուֆլյուշկա, որ արվում է՝ կապիտուլյացիոն կառավարության նախընտրական «ֆալշստարտը» քողարկելու համար:

ՀԳ. *Լավ է՝ մետրոյում ինձ «դայաղ» չեղավ: Այլապես ես հիմա կլինեի արդարադատության նախարարության հիմնարկներից մեկում՝ հասարակական կարգը խախտելու եւ հանրության համար վիրավորական արտահայտություններ հնչեցնելու մեղադրանքով: Բայց ես մեղավո՞ր եմ, որ Ալիեւի քարտեզի մասին իմ ուրույն կարծիքն ունեմ:*

ՀԳ1. *Ալեն, ներկուսակցական քարոզարշավի շաուրման ծամելիս չեն խոսի: Դա թե՛ տգեղ է, թե՛ վտանգավոր: Կարող ա կատիկիդ թռնի ու… պատերազմ սկսվի:*

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ՄԵՆՔ՝ ԲՈԼՈՐՍ, «ՓԱԽԱԾՆԵՐ ԵՆՔ» ԵՎ ՄԻՇՏ ԷԼ ԿԱՐԾԻՔ ՀԱՅՏՆԵԼ ԵՆՔ

«Ես միշտ էլ կարծիք հայտնելու իրավունք ունեցել եմ»,- ասում է երեւանցի ընտրողը, որը չի ընտրելու Նիկոլ Փաշինյանին: Այո, մենք միշտ էլ ունեցել ենք կարծիք հայտնելու իրավունք, եւ հատկապես այս խումբը, որը փոքրացրել է մեր հայրենիքի քարտեզը, ուներ կարծիք հայտնելու իրավունք, եւ դա հայտնում էին բարձր եւ համառ, այնքան բարձր ու այնքան համառ, որ հնարավորություն ունեցան լսելի եւ ընկալելի լինել, գալ իշխանության եւ փոքրացնել մեր հայրենիքի քարտեզը, իսկ հետո ուրախ պարում են:

Հիմա նրանք այդ քարտեզը գովազդում են եւ առաջարկում մարդկանց, որպես մի փոքրիկ հուշանվեր, կրծքանշան, որը պետք է զարդարի մեր կերպարը, մինչդեռ միայն ցավ ու ափսոսանք է հիշեցնում: Զարմանալի չէ, որ մարդիկ, ովքեր ունեն արժանապատվություն, չեն ուզում ձեր ձեռքից վերցնել այդ քարտեզը: Դա անարգանք կամ լիովին ճիշտ ուղղագրությամբ գրված՝ արհամարհանք չէ մեր քարտեզի նկատմամբ: Դա նշանակում է, որ ձեր ձեռքից անգամ քարտեզ վերցնել չի կարելի: Մարդիկ հասկանում են, որ այդ քարտեզը բաժանում եք՝ ձախողումը որպես հաջողություն վաճառելու նպատակով: Դա միշտ չէ, որ հաջողվում է, թեեւ դեռեւս նաեւ հաջողվում է:

Մենք գիտենք, որ տրանսպորտում ծամոնի պես կպչել օտար կանանց չի կարելի: Դա անպատեհ եւ տգեղ վարքագիծ է, հատկապես, երբ այդ կինը ո՛չ ձեր կուսակիցն է, ո՛չ ձեր համակիրը: Ինչո՞ւ եք ներկուսակցական հանդիպումների շրջանակում նրան անհանգստացնում, երեխայի ներկայությամբ հարձակվում եւ փրփուր շաղ տալով՝ վիրավորում: Ես հիմա չեմ պատրաստվում դատապարտել այս դրվագը, թող ների ինձ արժանապատիվ կինը… բայց ես ուրախ եմ, որ առիթներ են լինում, երբ վարչապետը ցույց է տալիս իր իրական կերպարը եւ արտահայտում իր իրական մտքերը: Լավ կլինի, որ նա ամեն օր գնա ու շփվի մարդկանց հետ ու ցուցադրի այդ ամբողջ ոդիսականը: Դիտարժան է, ինչ խոսք, եւ հետեւություններ կանեն հատկապես մարդիկ, ովքեր որոշել են չգնալ ընտրության: Սա նրանց է պետք, որ հասկանան՝ ընտրության գնալ պետք է ցանկացած պարագայում, ամեն գնով, թեկուզ բուքուբորան լինի հունիսի 7-ին, եթե անգամ ամառվա շեմին ձյուն գա, ու անանցանելի դառնան բոլոր ճանապարհները, պետք է գնալ ընտրության, թեկուզ չկա մեկը, որին իրոք ուզում են ընտրել, պետք է գնան, քանի որ կա մեկը, որին հաստատ չեն ուզում ընտրել:

Այս իմաստով, վերջին կիրակնօրյա հանդիպումները մեծ վնաս հասցրին ՔՊ-ին: Երեւանյան հանդիպումները ցույց տվեցին, որ մարդիկ, որոնց բոլոր ատամները տեղում են, հիշողությունն ու տրամաբանությունը վնասված չեն, դեմենցիայի նշաններ չկան, ծերունական մառազմով էլ չեն տառապում, հիմնականում պատրաստ չեն նրանց ձեռքից որեւէ քարտեզ ընդունել, նույնիսկ եթե դա մեր երկրի քարտեզն է՝ քարտեզ, որը հենց նրանց գործուն միջամտությամբ միայն ափսոսանք ու ցավ է առաջացնում, հպարտության ոչինչ դրանում, ցավոք, չկա:

Նկատելի է, որ ՔՊ-ն ունի մի անեղեր պատկերացում, թե ինչ ուզեն՝ ասեն, վաղը դրա հակառակն ասեն՝ կանցնի, ու զարմանալիորեն այդպես բազմիցս եղել է: Նաեւ վստահ են, որ ինչ ուզեն, ասեն, ապա ներողություն խնդրեն, նույնպես կանցնի, ու զարմանալիորեն այդպես եւս եղել է: Դա է պատճառը, որ երկար չեն մտածում մի բան ասելիս, ներողությունը կա ու կա: Բայց՝ ոչ, ընկերներ, ձեր ներողությունն այլեւս չի ընդունվում: Այս անգամ գոնե պարզից էլ պարզ էր, որ ներողությամբ մետրոյի վիճաբանությունը չչեղարկվեց, համացանցը թնդում է. բարկանում են վիճաբանության դրվագի վրա եւ ծիծաղում ներողության վրա:

Ձինը շշից դուրս է գալիս: Լինել համարձակ, մերժել, ինչպես Իջեւանում կասեն՝ «Պռատանց» քարտեզը, դառնում է նորմալ եւ գովելի, դառնում է հերոսի զավակին վայել արարք եւ այդպես էլ կա: Իսկ մենք՝ բոլորս, հերոսի զավակներ ենք, մենք՝ բոլորս, «փախածներ» ենք՝ Կարսից ու Արդահանից, Բիթլիսից ու Ադանայից, Ստեփանակերտից ու Հադրութից, մենք փախել ենք թշնամուց, որովհետեւ ճանաչում ենք նրան…

Մենք ճանաչում ենք նրան, ով ուրախ է, որ մեր քարտեզը փոքրացել է, բայց էլ փախչելու տեղ չունենք, էլ ավելի այդ քարտեզը փոքրացնելու ձեւ չունենք: Եվ, ամենայն հավանականությամբ, այս երկու ամիսը բավական է լինելու, որպեսզի ամեն մարդ հասկանա, որ այս մարդիկ, ահա, որ շրջում են երկրում ու ուրախ հարցնում՝ «քեֆ-հալ, քեֆ-հալ, բարեւ, եղբայր, լավ ես, թոշակդ ավելացել ա, գիտե՞ս», Քյավառի կարտոլ, Աշտարակի սուջուխ, Եվրոպայի խնձոր, էլ հայտնի չէ՝ որտեղի կուկուռուզ ու պեռաշկի ուտող այս զբոսախմբի անդամները, որ համատեղությամբ նաեւ երկիր են կառավարում, ուրախ են եւ երջանիկ, որ մեր հայրենիքի քարտեզը փոքրացել է: Այդ առիթով մեղքի զգացում, ափսոսանք չունեն, հակառակը՝ հպարտանում են, ինքնամոռաց երգում են՝ երգել չիմանալով, նվագում են՝ տաղանդ չունենալով, եւ պարում են՝ ինչպես կարողանում են, որտեղ հարմարվում է, եւ, իհարկե, ուղիղ վիրավորում են բոլոր նրանց, ովքեր համարձակվում են հայտնել իրենց կարծիքն այդ ամենի վերաբերյալ:

Շաքե ԱՎՈՅԱՆ

Լրատվամիջոցներում հազվադեպ են հանդիպում նյութեր, որոնք վերաբերում են պատմության իրավական վերանայման փորձերին:

ՊԱՏՄԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՆՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ



Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

Խոսքը վերաբերում է մեկ դար առաջ կնքված փաստաթղթերին՝ Treaty of Moscow (1921)-ին եւ Treaty of Kars (1921)-ին, որոնք ձեւավորեցին Թուրքիայի եւ Հարավային Կովկասի այսօրվա սահմանների հիմքը: Այս թեման երկար տարիներ քննարկվել է պատմական կամ քաղաքական հարթակներում: Սակայն առաջին անգամ փորձ է արվել այն տեղափոխել իրավական դաշտ: ՌԴ քաղաքացի, հասարակական գործիչ Գեորգի Անտոնով-Միրզախանյանը մի քանի տարի առաջ դիմեց ՌԴ գերագույն ատյաններին, ապա դատարան՝ վիճարկելով այդ պայմանագրերի իրավական հիմքերը: Գործը քննվեց, բայց հայցերը մերժվեցին, Անտոնովը համոզված էր, որ այդ մերժումները փակուղի չեն ստեղծել, ավելին՝ բացել են ճանապարհ՝ միջազգային իրավական հարթակներ դիմելու համար: Այսօր նա հարցը բարձրացրել է միջազգային կառույցներում, Հայաստանում հիմնադրել է «Վիլսոնյան Հայաստան» անվամբ ՀԿ: Մենք նրան հարցեր ուղարկեցինք, ստացանք պատասխան՝ **«Գեորգի Անտոնով-Միրզախանյանի թիմակիցներ»** ստորագրությամբ:

- Ինչպե՞ս առաջացավ 1921 թվականի Մոսկվայի եւ Կարսի պայմանագրերը վիճարկելու գաղափարը:

- Մենք համոզված էինք, որ այդ պայմանագրերի պատմափաստագրական եւ իրավական հիմքերում կան հարցեր, որոնք երբեւէ չեն քննվել իրավական դաշտում: Այդտեղից էլ ծնվեց գաղափարը՝ խնդիրը տեղափոխել իրավական դաշտ: Սփոփիչ հանգամանք էր այն, որ 1995թ. ՌԴ Պետդուման Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանությունը ճանաչել եւ դատապարտել էր: Հաշվի առնելով նաեւ Թուրքիայի ներկայիս հակահայ քաղաքականությունը, Արցախի հայաթափումը՝ պետք էր հետեւողական գտնվել ու հասնել մեր ժողովրդի օրինական շահերը ոտնահարող Մոսկվայի եւ Ղարսի ոչ լեգիտիմ պայմանագրերի չեղարկմանը:

- Ինչո՞ւ որոշեցիք սկսել հենց Ռուսաստանի դատարաններից:

- Որովհետեւ այդ երկու պայմանագրերի վրա կան բոլշեւիկյան Ռուսաստանի ղեկավարների ստորագրությունները: Մենք դիմել ենք ՌԴ-ի, Պետդումայի, Դաշնային խորհրդի նախագահներին՝ նկատի ունենալով, որ այսօրվա ՌԴ-ն իրավահաջորդն է բոլշեւիկյան Ռուսաստանի: Իրենց պատասխաններով հենց նրանք մեզ ուղղորդեցին՝ ՌԴ դատարաններ հայց ներկայացնելու: ՌԴ արտաքին գործերի նախարարությունը, օրինակ, պատասխանում նշել է. «Պայմանագրերի երկարաձգման եւ չեղյալ հայտարարման վերաբերյալ բարձրացված հարցը պետք է լուծվի՝ հաշվի առնելով պատմական համատեքստը, հետագա պայմանագրային պրակտիկայի եւ ԽՍՀՄ տարածքում նոր ինքնիշխան պետությունների առաջացման հետ կապված իրավիճակով, խաղաղության պայմանագրերը եւ սահմաններ հաստատող պայմանագրերը չեն ենթադրում պայմանագրերի միակողմանի դադարեցում, առանց որեւէ իրական իրավական հետեւանքի, դա քաղաքական ապակայունացնող ազդեցություն կունենա արդեն իսկ Անդրկովկասի անկայուն իրավիճակի վրա»: Մենք ՌԴ քաղաքացիներ ենք եւ իրավունք ունենք դիմելու իշխանություններին եւ դատարաններին: Դա նաեւ անհրաժեշտ քայլ էր՝ հետագայում միջազգային ատյաններ դիմելու համար: Դատարանները նույն հիմնավորմամբ մերժեցին հայցը՝ նշելով, որ ՌԴ դատարաններն իրավասու չեն քննարկելու 1921թ. կնքված միջազգային պայմանագրերի վերանայման հարցը: Բացի այդ, իբր՝ մեր ներկայացրած հայցից չի հետեւում, թե այդ պայմանագրերն ուղղակիորեն խախտում են մեր անձնական իրավունքները: Այսինքն՝ հարցը դիտարկվեց ոչ թե պատմական կամ իրավական տեսանկյունից, այլ միայն անհատական իրավունքների շրջանակում: Այնուհետեւ դատարանները հարցը քննարկեցին ըստ էության: Մենք անցանք եւս դատական 5 ատյան՝ շրջանային, վերաքննիչ, վճռաբեկ, գերագույն եւ սահմանադրական, որոնք արձանագրեցին՝ ՌԴ դատական համակարգն իրավասու չէ քննարկել միջազգային պայմանագրերի չեղարկման (դենոնսացիա) հարցը, եւ առաջարկեցին դիմել ՄԱԿ-ի բարձրագույն միջազգային դատարան: Այս ամենն սպասելի էր: Այդ որոշումները հնարավորություն տվեցին անցնելու հաջորդ փուլին: Երբ ներպետական դատարանների բոլոր հնարավորությունները սպառվում են, կարելի է դիմել միջազգային կառույցների: Մեր գործունեության ընթացքում հաղթահարել ենք բազմաթիվ խնդիրներ՝ ներքին կազմակերպչական խնդիրներ, նույնիսկ ՌԴ քաղաքացիությունից զրկելու որոշում է եղել, որը հիմա նույնպես վիճարկվում է դատարաններում: Բայց ոչ մի արգելք չի կարող խոչընդոտել մեր աշխատանքներին:

- Ի՞նչ նպատակներ է հետապնդում «Վիլսոնյան Հայաստան» հասարակական կազմակերպությունը:

- Չի փոխվել մեր հիմնական նպատակը՝ հասնել Վիլսոնյան իրավարար վճիռը գործողության մեջ դնելուն: Երբ հասկացանք, որ հարցը պետք է տեղափոխվի միջազգային հարթակ, անհրաժեշտ դարձավ նաեւ կազմակերպչական հիմքեր ստեղծել: Այդպես ստեղծվեց «Վիլսոնյան Հայաստան» ՀԿ-ն: Այն հիմնվում է ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի 1920 թ. նոյեմբերի 22-ի արբիտրաժային որոշման վրա եւ նպատակ ունի պահանջել այդ իրավական ժառանգությունը: Մենք քաղաքական նպատակներ չենք հետապնդում եւ ոչ մի պետության ու ժողովրդի շահերի դեմ չենք գործում: Հետապնդում ենք միայն հայ ժողովրդի ազգային, իրավական շահերը պաշտպանելու նպատակ: Հույս ունենք հասնել պատմափաստագրական եւ իրավական արդարության: Այս պահին հայցադիմում ենք ներկայացրել միջազգային կառույցներին: Դրանց թվում են նաեւ European Court of Human Rights-ը եւ United Nations Human Rights Committee-ը: ՄԱԿ-ի մարդու իրավունքների կոմիտեն արդեն ընդունել է դիմումը: Դա կարեւոր փուլ է, թեեւ դեռ վաղ է խոսել վերջնական արդյունքների մասին: Մենք չենք ցանկանում հիմա շատ մանրամասներ բացահայտել: Գործն ընթացքի մեջ է, եւ ավելորդ հրապարակայնությունը կարող է խանգարել իրավական գործընթացին: Մենք համաձայն ենք իմաստունի հետ. «Այն, ինչ չես ուզում, որ թշնամիդ իմանա, այդ մասին մի տեղեկացրու բարեկամիդ»: Միայն կարող ենք ասել, որ այս հարցը վաղ թե ուշ պետք է ստանա իրավական գնահատական: Ունենք բազմաթիվ համակիր կազմակերպություններ ու հայտնի անձեր թե Եվրոպայում, թե ԱՄՆ-ում եւ տարբեր երկրներում: Սա միայն իրավական հարց չէ: Խոսքը պատմական հիշողության եւ արդարության մասին է: Մենք համոզված ենք, որ պատմական արդարության հարցերը չեն անհետանում՝ կարող են երկար ժամանակ մնալ փակ, բայց մի օր վերադառնում են միջազգային օրակարգ:

ՀԳ. *Գեորգի Անտոնով-Միրզախանյանի թիմակիցները նշել են նաեւ, որ միջազգային ատյաններին դիմելու նախաձեռնությունը սկզբնական փուլում է, եւ հնարավոր է, որ առաջիկայում հրապարակվեն նոր փաստաթղթեր եւ իրավական նյութեր, որոնք ավելի ամբողջական պատկեր կստեղծեն այս գործընթացի մասին:*

ՄՈՐՁԵԼՈՎ ՆՍԵՄԱՑՆԵԼ ՎԵՀԱՓԱՌԻՆ՝ ԻՐԵՆՔ ԽԱՅՏԱՌԱԿՎԵՑԻՆ

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Փորձելով նսեմացնել Ամենայն հայոց Գարեգին 2-րդ կաթողիկոսին՝ Հայաստանի իշխանություններն իրենք իրենց խայտառակեցին վրաց ժողովրդի եւ ողջ քրիստոնյա աշխարհի առաջ: Այս մասին հայտարարել է ՀԱԵ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի թեմական խորհրդի նախագահ, Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Արամայիս Քամալովը՝ «Ալֆանյուզի» փոխանցմամբ: «Հոգու խորքում շատերը հույս ունեին, որ Հայաստանի իշխանությունները, հիմք ընդունելով Հայաստանի վաղ քրիստոնեական արժեքները, չեն խոչընդոտի, որպեսզի Գարեգին 2-րդ Ամենայն հայոց կաթողիկոսը վրաց ժողովրդի համար այս սգի շրջանում կարողանա այցելել Վրաստան եւ հրաժեշտ տալ Վրաստանի Իլյա 2-րդ հանգուցյալ պատրիարքին»,- ասել է Քամալովը: Նրա դիտարկմամբ՝ երկու հայրապետների քրիստոնեական եղբայրական հարաբերությունները բազմամյա պատմություն ունեն: Նրանց կապել են առ Աստված հավատքն ու երկարամյա ծառայությունը, հոգածու վերաբերմունքը քրիստոնեական արժեքների նկատմամբ, մշակույթն ու իրենց ժողովուրդներին նվիրվածությունը: Ու թեեւ Վրաց պատրիարքությունից հրավեր ստացվել էր Ամենայն հայոց հայրապետի անունով, Հայաստանի իշխանությունները նրան թույլ չտվեցին մեկնել Թբիլիսի՝ մասնակցելու հուղարկավորության եւ վերջին հրաժեշտի արարողություններին: Դա չի կարող դժգոհություններ չառաջացնել եւ վիրավորում է բոլոր հայերի կրոնական զգացմունքները՝ ամոթով թողնելով եղբայրական վրաց ժողովրդի առաջ: Քամալովը նկատել է, որ խոսքեր չկան՝ արտահայտելու այն զայրույթը, որն առաջացել է Հայաստանի իշխանությունների անմարդկային, հակաքրիստոնեական վարմունքի պատճառով, ովքեր փորձեցին ստորացնել Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին 2-րդին, սակայն իրենք իրենց խայտառակեցին՝ վրաց ժողովրդի եւ համայն քրիստոնեական աշխարհի առաջ:

Դիլիջանցիները երեխաների համար խաղալու տեղ են խնդրում

Դիլիջան քաղաքի բնակչուհի Անժելա Այվազյանը քաղաքի Մանթաշյան եւ Սայաթ-Նովայի փողոցների բնակիչների անունից Ֆեյսբուքում բաց նամակ է հրապարակել. «Դիլիջան քաղաքի պատասխանատու կառույցներին եւ բոլոր նրանց, ովքեր կարծում են, որ երեխաները կարող են «չխանգարել»: Ես՝ Անժելա Այվազյանս, երկու երեխաների մայր, դիմում եմ Ձեզ՝ Դիլիջան քաղաքի կենտրոնական թաղամասի բնակիչների անունից՝ բարձրաձայնելու մի «աննշան» խնդիր. մեր երեխաները պարզապես տեղ չունեն խաղալու: Այո՛, պարզվում է՝ 21-րդ դարում երեխա լինելը շքեղություն է: Մեր թաղամասում կան ակտիվ երթեւեկություն, մեքենաներ, արգելքներ… միայն երեխաների համար նախատեսված անվտանգ տարածք չկա: Երեխաները կարող են փորձել խաղալ փողոցում՝ մի փոքր ադրենալին ավելացնելով իրենց առօրյային: Կամ էլ կարող են չխաղալ ընդհանրապես. երեւի դա էլ տարբերակ է: Հատկապես ոգեշնչող է Կենտրոնական բանկի բնակելի շենքի հարակից տարածքը, որ մեր երեխաների մուտքը 12 տարի խիստ արգելվում է: Անկեղծ ասած՝ մի փոքր էլ զարմացած ենք, որ դեռ չի փակցվել «Осторожно, злые собаки» գրությունը. մթնոլորտը գրեթե ամբողջությամբ համապատասխանում է: Ստացվում է՝ ընտրությունը շատ պարզ է. կամ վտանգավոր փողոցներ, կամ փակ դարպասներ: Իսկ մենք դեռ հարցնում ենք՝ որտե՞ղ պետք է խաղան երեխաները: Մեր մանկության տարիներին բակերը բաց էին, խաղը՝ ազատ, իսկ մանկությունը՝ լիարժեք: Այսօր, ցավոք, հենց մեր երեխաներն են կանգնած ընտրության առաջ՝ վտանգավոր փողոցների եւ փակ տարածքների միջեւ:

Ուստի, թույլ տվեք «համարձակվել» եւ առաջարկել մի քանի գաղափար՝

• գուցե հնարավոր է ստեղծել անվտանգ խաղահրապարակ

• գուցե գտնվի մի փոքր տարածք, որտեղ երեխաները կարող են խաղալ առանց արգելքի

• գուցե վերանայվեն այն սահմանափակումները, որոնք երեխաներին դարձնում են անցանկալի «հյուր»՝ իրենց իսկ թաղամասում:

Սա հեգնանք չէ, այլ՝ իրականություն, որն արդեն չափազանց երկար է շարունակվում:

Հուսով ենք՝ մի օր մեր երեխաները կունենան այն, ինչը համարվում է ամենապարզը՝ անվտանգ բակ եւ ազատ խաղ»:

ԴԻՄՈՒՄ ԵՄ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻՆ՝ ԽՈՍԵՔ, ԹՈՒՅԼ ՄԻ ՏՎԵՔ, ՈՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՀԱՎԱՏԱ ԱՅԴ ԿԵՂԾ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

*Գրականագետ, պրոֆեսոր **Ազատ Եղիազարյանի** հետ զրուցել ենք մտավորականի կարեւորության եւ պարտականությունների մասին:*



- Իշխանավորները փորձում են մտավորականներին ուղղորդել, դասեր տալ, թե ինչ անեն եւ ինչպես անեն: Մտավորականը պատասխանատու է իր խղճի եւ կոչմանն, թե՞ իշխանավորի առաջ:

- Խնդիրներ կան, որ այսօր մեզ համար չափազանց կարեւոր են եւ կապված են մտավորականության հետ: Ինչո՞ւ պետք է թույլ տանք, որ մեզ «վերեւից» այնպիսի բաներ ասեն, որպեսզի զայրույթով հարցնենք՝ դուք այս ժողովրդին ինչի՞ տեղ եք դնում: Հասկացանք, ծանր վիճակում ենք, սակայն, ինչպես Տերյանն է ասում, գերված ենք մենք, բայց ոչ ստրուկ: Այդ միշտ պետք է հիշենք. գերված ենք, բայց ստրուկ չենք, որ ինչ ասեն՝ ծափ տանք: Մտավորականության ամենակարեւոր խնդիրն է, որ թույլ չտա՝ մեր հասարակական եւ հոգեւոր կյանքի մակարդակն իջնի: Բայց աչքիս առաջ իջնում է: Այդ բազում կուսակցությունները, տեսաբաններն ի՞նչ են անում: Խելացի մարդիկ են, բայց ինչո՞վ են զբաղված: Երբ մեզ ասում են, որ մեր հազարամյակները սխալ հունով են ընթացել, եւ պիտի ուղղենք, մեկը պիտի՞ բարձրաձայնի, որ այդպես չէ: Ժողովրդի պատմությունը ճիշտ կամ սխալ չի գնում, մեր պատմությունն այդպես է եղել, եւ մենք պիտի հաշվի նստենք այդ պատմության հետ: Որեւէ մեկը՝ լինի նախագահ, վարչապետ թե նախարար, իրավունք չունի մեզ դասեր տալու. իրենք ժողովրդի կամքը պետք է կատարեն: Նրանք ժողովրդի կողմից վարձված ծառայողներ են եւ ոչ թե երկնքից իջած մարգարեներ ու դաստիարակներ, որ փորձում են այս ժողովրդին վերադաստիարակել, վերափոխել, նոր ժողովուրդ ստեղծել: Ծիծաղելի հավակնություններ են:

- Այսօր մեզ պարտադրում են, որ մեր ինքնությունից հրաժարվենք, մոռանանք Արցախը, պատմությունը, խորհրդանիշներն ու արժեքները: Առանց հիշողության եւ անանցյալ՝ հնարավո՞ր է մնալ ազգ եւ դիմագիծ ունեցող պետություն:

- Հնարավոր չէ: Երբ ասում են, թե զինանշանի վրայից հանենք Արարատ լեռը, հարյուր նախագահ ու վարչապետ գան, դա հնարավոր չէ: Մասիսը մեր գիտակցությունից հանել հնարավոր չէ, անիմաստ գործ է: Սահմաններ կան, որ ոչ ոք չպիտի անցնի, ոչ ոք չպիտի կասկածի տակ առնի ժողովրդի ինքնությունը, պատմությունը: Եվ ի՞նչ է նշանակում այդ «իրական Հայաստանի» տեսիլը: Մենք ունենք մի Հայաստան: Այնպես է ստացվել, որ հողերի մեծ մասը մնացել է Թուրքիայի սահմաններից ներս, մի մասն էլ այլ կերպ ենք կորցրել, բայց դա մեր պատմությունն է: Մեր Հայաստանն այդ է, եւ այդպիսին է մեր պատմությունը: Մենք չենք կարող Վանա լճից, Սասունից հրաժարվել եւ չենք կարող սփյուռքահայությունից հրաժարվել: Իսկ «իրական Հայաստանը» հենց դրան է հանգեցնում. մենք գործ չունենք սփյուռքի հետ… գործ չունեցանք Արցախի հետ, եւ ի՞նչ: Ես չեմ կարծում, որ մեր ղեկավարները դավաճան են: Իրենք հավատացած են, որ մեր ժողովրդի բարերարն են: Այնինչ այդպես չէ. ժողովրդի կյանքում լավ բան անելու համար պետք է ունենալ Թումանյանի կամ Խրիմյան Հայրիկի մակարդակը: Այսօր թե «իրական Հայաստան» ենք ստեղծում, հազարումի սխալ ենք ուղղում, Եկեղեցու կառույցն ենք փոխում, վերանորոգում եւ այլն: Եվ ես չեմ դիմում քաղաքական գործիչներին, ես դիմում եմ մտավորականությանը. պիտի խոսել, ասել, թույլ չտալ, որ ժողովուրդը, թեկուզ ժամանակավոր՝ հավատա այդ կեղծ տեսություններին: Ժողովուրդն իր պատմությունն ունի, եւ այդ պատմությունը պիտի շարունակվի:

Թող ժողովուրդը քվեարկի, իր կարծիքն արտահայտի, բայց ելնելով որոշակի սկզբունքներից: Այդ ո՞վ իրավունք ուներ մեզ ասելու, թե Արցախի Հանրապետության հիշատակումը պատերազմ է նշանակում: Արցախն ավելորդ բա՞ն էր, որ հրաժարվեցինք: Վերջերս Շվեյցարիայում դատի են տվել Ադրբեջանին՝ Արցախի նկատմամբ վերաբերմունքի համար: Այդ ինչո՞ւ են նրանք հետաքրքրվում, իսկ մեր կառավարությունը չի հետաքրքրվում: Եվ մեր մտավորականությունն այդ մասին չի խոսում: Ես շատ դժգոհ եմ եւ ինձնից, եւ մեր մտավորականներից, երբ Արցախն սկսեցին դատարկել, մենք չխոսեցինք: Այդ ինչպե՞ս եղավ, այդ ինչպե՞ս են կարողացել բարոյազրկել մեր ժողովրդին, որ Արցախի համար այդքան մարդ զոհվեց, բայց Արցախի հայաթափման ժամանակ ոչ մի մարդ չխոսեց: Մենք չենք ասում՝ պատերազմ ենք ուզում, ո՛չ, պատերազմ չենք ուզում: Բայց մենք այսօր պիտի Արցախի՞ց հրաժարվենք, վաղն էլ՝ Սյունիքի՞ց, մյուս օրը՝ ամբողջ հայրենիքի՞ց: Այդպիսի ժողովուրդը եւ այդպիսի պետությունը չեն կարող գոյատեւել:

- Ներսից մեզ պարտադրում են հրաժարվել այն ամենից, որը չի տեղավորվում «իրական Հայաստանի» մեջ: Նշենք, որ Մատենադարանի ձեռագրերի, մեր պատմության եւ մշակույթի մեծ մասը չի տեղավորվում այդ «իրականի» մեջ: Իսկ դրսից պարտադրում են, որ չկա Հայաստան, կա «Արեւմտյան Ադրբեջան»: Սրա՞ անունն է խաղաղություն:

- «Իրական Հայաստանն» անիմաստ տեսություն է: Այդ տեսությունը մեզ ստիպում է հրաժարվել մեր իրական պատմությունից: Մենք հրաժարվո՞ւմ ենք մեր ինքնությունից: Եթե մենք հիշատակում ենք մեր «Սասունցի Դավիթ» էպոսը, Վանա լիճը, Աղթամար կղզու Սուրբ Խաչ եկեղեցին, դա դեռ չի նշանակում, որ մենք զենքով գալիս ենք մեր հողերը ետ վերցնենք: Պատմությունն ու պատերազմը նույն բաները չեն: Մենք շարունակում ենք հիշել, մեր հոգեւոր հայրենիքն է, իսկ թե որ սահմանագծերում է կամ կլինի, դա ուրիշ հարց է: Այդպես դառնալու ենք անհայրենիք ցեղախումբ: Անընդհատ ասում են խաղաղություն եւ այդպես կաշառում ժողովրդին: Խաղաղությունը շատ լավ բան է, բայց ինչպիսի՞ խաղաղության մասին է խոսքը: Անցյալ դարի 30-ականներին Անգլիայի եւ Ֆրանսիայի ղեկավարները՝ Չեմբերլենը եւ Դալադիեն, ցնծագին հայտարարեցին իրենց ժողովուրդներին, որ Հիտլերի հետ խաղաղություն են կնքել: Հետո ի՞նչ եղավ, ինչքա՞ն տեւեց այդ խաղաղությունը: Հիմա մենք մոտավորապես այդ վիճակում ենք: Իսկ «Արեւմտյան Ադրբեջանը» սարքովի տերմին է, այդպիսի բան չի եղել: Էլ չեմ ասում, որ բուն Ադրբեջանն է սարքովի տերմին: Ադրբեջան սարքեցին, եւ մենք մարսեցինք, հիմա էլ ասում են՝ Հայաստանն է «Արեւմտյան Ադրբեջան»: Մտավորականությունն այստեղ է, որ պիտի իր գործը կատարի: Կառավարությունն ինչո՞ւ չի խոսում այդ մասին: Հանկարծ չվիրավորե՞ն Ալիեւին, էլ չեմ ասում՝ Էրդողանին: Ադրբեջանի հետ հարաբերություններ պետք է ստեղծենք, բայց մ՚այդ գնով: Բաներ կան, որ մենք չպիտի թույլ տանք, մեր մտավորականությունը չպիտի թույլ տա՝ խաղեր խաղալ մեր պատմության հետ, մեր ինքնության, քաղաքակրթության հետ: Այդպիսի բաները չպիտի անպատիժ ասվեն եւ անպատիժ անցնեն: Իմ այս տարիքում ես չեմ ուզում աշխարհից գնալ այն տպավորությամբ, որ մենք ամեն ինչ զիջում ենք: Ինչո՞ւ ենք մենք մեր մշակույթից հրաժարվում: Ով ուզում է լինի, ինչո՞ւ է քիթը խոթում Ցեղասպանության թանգարանի գործերի մեջ: Եվ Արցախի Հանրապետությունը մեր պատմությունն է վերջապես. ի՞նչ է նշանակում՝ եթե պատարագի ժամանակ «Արցախի Հանրապետություն» ես ասում, ուրեմն պատերազմ ես ուզում: Այսպիսի դեպքերում, կրկնեմ, նաեւ գուցե առաջին հերթին, մտավորականներն են մեղավոր: Այնպիսի փոթորիկ պիտի բարձրանար Հայաստանում, որ թույլ չտար այդքան անպատասխանատու խաղեր խաղալ մեր պատմության եւ մշակույթի հետ, բայց փոթորիկ չբարձրացավ: Իսկ հիմա կառավարության ղեկավարները կարծում են, որ իրենք իրավունք ունեն եւ մտավորականությանը խրատելու, եւ հասարակ ժողովրդին:

Մենք լավ մտավորականություն ունեինք եւ Խորհրդային Միության ժամանակ, եւ Արցախյան շարժման առաջին տարիներին. ինչքան պատվախնդիր էին ազգային հարցերում: Ոչ միայն Պարույր Սեւակն ու Սիլվա Կապուտիկյանն էին, առհասարակ՝ այդպես էր: Իսկ հիմա մենք հասանք այնտեղ, որ մեզ ասում են՝ Հայաստանն «Արեւմտյան Ադրբեջան» է, եւ, միեւնույն է, մենք այդ ասողի՝ Ալիեւի հետ հաճելի, գրեթե եղբայրական զրույցներ ենք ունենում: Մտավորականը պարտավոր չէ խառնվել ներկուսակցական վեճերին, ընտրություններ են՝ թող անեն, բայց բաներ կան, որոնց չպիտի ձեռք տան, այսպես կոչված՝ կարմիր գծերը շատ են: Եվ ո՞վ է իրավունք տվել, ո՞վ այդքան լավ գիտի մեր պատմությունը, որ սովորեցնի, թե ինչպես խոսենք պատմության մասին կամ ինչ անենք, որ «իրականՀայաստան» ստեղծվի:

- Կառավարությունը հայեցակարգ է մշակել, որ այսուհետ ֆինանսավորելու են այն ստեղծագործություններն ու մշակութային նախագծերը, որոնք պատերազմ չեն հրահրում եւ չեն բորբոքում վրեժ ու ատելություն: Նախ, ի՞նչ չափանիշներով են որոշելու, եւ արդյո՞ք մենք ունենք նման ստեղծագործություններ, որից զգուշանում են եւ փորձում կանխարգելել:

- Այդ բոլոր խոսակցությունները դարձյալ ուղղված են մի նպատակի. հանկարծ Ալիեւը չզայրանա: Ես երբեք «դավաճան» բառը չեմ օգտագործել մեր ղեկավարության հանդեպ: Բայց իրենք կարծում են, որ վերեւից իրենց իրավունք է տրված վերադաստիարակել մեր ժողովրդին: Եթե Ալիեւի ու Էրդողանի ձեռքերը չենք համբուրում, գոնե չզայրացնենք: Այդպես մեր ներքին ուժն ենք ոչնչացնում: Մեր նորաթուխ դաստիարակները թող Թումանյան կարդան, տեսնեն, թե ոնց է գրել: Կառավարությունը նման հարցերին չպետք է խառնվի, կառավարությունը պետք է լինի այս ժողովրդի հույզերի, պահանջների արտահայտիչը: Ես եւ ինձ նման բոլոր մարդիկ՝ մտավորականները եւ առհասարակ որեւէ մեկը, կռիվ չենք ուզում Թուրքիայի կամ Ադրբեջանի հետ, բայց այդ ստրկամտությունն էլ չենք ուզում: Արժանապատվությունն ազգի գոյության պայմաններից մեկն է, եթե մենք ուզում ենք հարատեւել որպես ազգ: Կարծում եմ՝ կհարատեւենք. ղեկավարներ շատ կգան ու կանցնեն, բայց Արարատը եւ մենք կմնանք: Դրա համար, ինչքան էլ պարտված լինենք, մենք պետք է կարողանանք մեր արժանապատվությունը պահել:

- Փորձենք ամփոփել մեր զրույցը՝ կրկին անդրադառնալով մտավորականի կերպարին: Իր կոչմանն արժանի՞ պահվածք է դրսեւորում այսօր հայ մտավորականը:

- Հենց այդ արժանապատվությունը բարձր պահելու առումով մեր մտավորականությանը շատ եմ մեղադրում: Չեմ զգում այդ ներքին բռնկումը, որ պետք է լիներ հիմա: Եթե մեր արժանապատվության հետ այսպես խաղում են, պետք է այդ բռնկումը լիներ: Առայժմ չկա: Ասում եմ՝ հանկարծ աշխարհից չգնամ այս տրամադրությամբ, բայց միշտ ուսանողներին ասել եմ՝ աշխարհի հնագույն քարտեզի վրա մյուս երկրները չկան, սակայն մենք կանք: Եթե այդ 3 հազար տարին դիմացել ենք, սրան էլ կդիմանանք: Ես մեր ժողովրդի ապագան մռայլ չեմ տեսնում: Թեեւ այս արտագաղթն ինձ շատ է մտահոգում, եւ մեր կառավարությունը ոչինչ չի անում՝ կասեցնելու համար: Ընդհակառակը, իրենց դուր է գալիս, որ ժողովուրդը պակասի, դիմադրությունը պակասի: Մտավորականությունը պետք է մի քիչ զգաստանա: Շատ բան մեզնից կախված չէ, բայց հոգեւոր կյանքը մեզնից է կախված: Շատ ենք զիջել: Ինչի՞ց է վախենում մտավորականությունը: Մենք ո՛չ քրեական հանցանք ենք գործել, ո՛չ էլ քաղաքական ընդդիմություն ենք. անում ենք այն, ինչ պարտավոր ենք անել:

Հուսիկ Արա

ՊԱՏԵՐԱԶՄԸ ՄՏԵԼ Է ՄԻ ՓՈՒԼ, ԵՐԲ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՅԼԵՎՍ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԻ

«Պատերազմը քաղցր է նրանց համար, ովքեր չեն տեսել այն»՝ զգուշացնում էր միջնադարի փիլիսոփա, գրող Էրազմ Ռոտերդամցին: Այսօր պետք է ավելացնել՝ պատերազմն առավել քաղցր է նրանց համար, ովքեր այն վարում են ուրիշների ձեռքով: Դոնալդ Թրամփի, Նեթանյահուի կառավարությունները եւ նրանց դաշնակից մեդիացանցերը ստեղծում են մշուշ, որտեղ անհնար է տարբերել

իրականը կեղծից: Միեւնույն ժամանակ Իրանը վարում է իր քարոզչական պատերազմը՝ նույնքան ագրեսիվ: Պաշտոնապես բոլորը խոսում են հաղթանակի մասին: ՆԱՏՕ-ն «գործընթացի» մեջ չի մտնում ամբողջ ուժով, որովհետեւ դա կնշանակի լայնածավալ պատերազմ, եւ երեւի զգուշանալով նոր համաշխարհայինից: ԱՄՆ-ն, Իսրայելը կանգ չեն առնում, որովհետեւ դա կնշանակի քաղաքական պարտություն հենց իրենց երկրներում: Իրանը չի նահանջում, որովհետեւ դա կնշանակի երկրի մասնատում: Այսինքն՝ բոլորը մնացել են մի կետում, որտեղ պատերազմը շարունակելն ավելի հարմար է, քան այն ավարտելը: Սա արդեն ոչ թե սխալ հաշվարկ է, այլ՝ գիտակցված ընտրություն:

Պատերազմը միշտ ունի ֆինանսական շահառուներ: Զենք արտադրողներ, էներգետիկ շուկաների խաղացողներ, քաղաքական էլիտաներ: Այս պատերազմը չի ավարտվում ոչ թե այն պատճառով, որ լուծում չկա: Չի ավարտվում, որովհետեւ այն դարձել է օգտակար: Աշխարհը կրկին նայում է մի պատերազմի, որի մասին շատ է խոսվում, բայց գրեթե ոչ ոք չի հասկանում՝ որտեղ է դրա ավարտը: Իրանա-ամերիկա-իսրայելական հակամարտությունը, որը պետք է լիներ «արագ գործողություն», արդեն վերածվել է երկարատեւ, հյուծող եւ վտանգավոր բախման: Բայց ամենաէականը նույնիսկ ռազմաճակատում չէ: Ամենաէականն այն է, թե ինչ է կատարվում դրա շուրջ՝ մարդկանց գիտակցության մեջ: Այս պատերազմն առաջին հերթին տեղեկատվական է: Կեղծ տեսանյութեր, անհետացող առաջնորդներ, հակասական հայտարարություններ: Երբ նույնիսկ պարզ չէ՝ ով է ողջ, ով՝ ոչ, պատերազմը դուրս է գալիս պարզ «իրականությունից» եւ մտնում մի տարածք, որտեղ ճշմարտությունն այլեւս նշանակություն չունի: Իսկ երբ ճշմարտությունը վերանում է, պատերազմը դառնում է անվերջանսահման:

Իրականությունը, որքան էլ փորձեն թաքցնել, մի բան հստակ ցույց է տալիս. արագ հաղթանակ չկա: Երկու շաբաթ, երեք շաբաթ, ամիսներ... եւ պարզ է դառնում՝ ոչ մի կողմը չի կարողանում կոտրել մյուսին: Սա արդեն դասական սխալ է, որը մարդկությունը կրկնում է տասնամյակներով՝ պատերազմ սկսողները միշտ թերագնահատում են դրա տեւողությունը եւ գինը: Այդ ընթացքում, մինչ ռազմավարական «հաշվարկները» ձախողվում են, իրական կյանքում տեղի է ունենում այն, ինչ երբեք չի մտնում հաղթանակի մասին հայտարարությունների մեջ: Քաղաքներ են ավերվում: Մայրերը ծննդաբերում են մեքենաների մեջ: Մարդիկ ապրում են փողոցում՝ նորածին երեխաների հետ: Նավաստիները մնում են ծովում՝ առանց սննդի ու ջրի: Պատերազմը երբեք միայն ռազմաճակատ չէ: Այն ամեն օր տարածվում է հասարակ մարդկանց կյանքի վրա՝ դարձնելով նրանց «կողմնակի, վնասակար էակներ»:

Միեւնույն ժամանակ աշխարհը սկսում է զգալ դրա տնտեսական հետեւանքները: Նավթի գներն աճում են, առեւտրային ուղիները փակվում են, պետությունները հայտնվում են նոր ճնշումների տակ: Հորմուզի նեղուցը, որը պարզապես աշխարհագրական կետ էր, հանկարծ դառնում է ամբողջ աշխարհի տնտեսության սրտի զարկը: Եվ այդ զարկը սկսում է խափանվել: Ամենավտանգավորն առջեւում է: Այս պատերազմը չունի հստակ ավարտի սցենար: Մի կողմը չի կարող հեշտությամբ նահանջել՝ կորցնելով հեղինակությունը: Մյուսը չի կարող լիարժեք հաղթել՝ առանց ավելի մեծ պատերազմի ռիսկի: Իսկ դա նշանակում է, որ պատերազմը կարող է կամ երկար շարունակվել, կամ հանկարծակի պայթել-ընդլայնվել՝ ներգրավելով նոր երկրներ, նոր ճակատներ, նոր միլիոնավոր մարդկանց: Պատմությունը ցույց է տվել՝ պատերազմներ սկսելը հեշտ է, բայց կանգնեցնելը՝ գրեթե անհնար, երբ դրանք արդեն դուրս են եկել վերահսկողությունից: Այսօր աշխարհը կանգնած է հենց այդ կետի վրա: Եվ ամենակարեւոր հարցը սա է՝ արդյո՞ք այսքան հակասական լուրերը, այս ամբողջ ցավը, իրենց տիրակալներ կարծող անձանց գործողությունները ցույց են տալիս պատերազմի ավարտի ցանկություն: Պատասխանը ցավալի է: Մարդիկ, հասարակությունները, որոշ պետություններ ցանկանում են դադարեցնել այս ամենը: Բայց ուժային կենտրոնները դեռ շարունակում են մտածել հաղթանակի խելահեղ տրամաբանությամբ, ոչ թե խաղաղության:

Այս հակասությունն է, որ երկարացնում է պատերազմը: Այս ամենից հետո մնում է մեկ պարզ ճշմարտություն. ինչպես բոլոր պատերազմները, այս պատերազմը եւս երբեք չի լուծելու այն խնդիրները, որոնց համար սկսվել է: Այն միայն ծնելու է նորերը՝ ավելի խորը, ավելի վտանգավոր, ավելի անլուծելի: Եվ գուցե ամենամեծ վտանգը հենց դա է՝ մարդկությունը կրկին սովորում է ապրել պատերազմի հետ, ընդունել այն որպես «նորմալ»: Բայց պատերազմը երբեք նորմալ չէ: Այն միշտ պարտություն է: Բոլորի համար: Եվ հենց սա է ամենամեծ մեղադրանքը: Երբ պատմությունը գրվի, հարցը չի լինելու՝ ով հաղթեց: Հարցը լինելու է՝ ովքեր թույլ տվեցին, որ սա շարունակվի, երբ արդեն պարզ էր, որ դա ոչ մի լուծում չի տալու: Եվ այդ պահին արդարացումներ չեն ընդունվելու: Որովհետեւ, ինչպես դեռ հինգ դար առաջ զգուշացնում էր Էրազմ Ռոտերդամցին, պատերազմը միշտ թվում է արդարացված՝ մինչեւ բացահայտվում է, թե ում համար էր այն իրականում շահավետ:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՁՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 24.03.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԳԱԼՈՒ Է ՀՈՒՆԻՍԻ ՈՒԹԸ, ՈՒ ԱՅՆ ԱՌԱՆՑ ՆԻԿՈԼԻ Է ԼԻՆԵԼՈՒ

Այսօրվա «չպատերազմը» ոչ թե այն պատճառով է, որ Հայաստանի վարչապետը Նիկոլ Փաշինյանն է, եւ ոչ էլ այնպես է, որ եթե վաղը հանկարծ պատերազմ լինի, ապա դա կլինի միայն այն պատճառով, որ Հայաստանի վարչապետը Նիկոլը չի լինի: Այս «չպատերազմը» հաստատվել է, որովհետեւ այդպես են դասավորվել այսօրվա տարածաշրջանային իրողությունները:

Եվ անկախ նրանից, թե ով կլինի Հայաստանի վարչապետը կամ ով չի լինի, «չպատերազմը» պահպանվելու կամ չպահպանվելու հարցը կախված կլինի ոչ թե վարչապետի ով լինելուց, այլ նրանից, թե երբ եւ ինչպես կփոխվեն տարածաշրջանին «չպատերազմ» բերող այսօրվա իրողությունները:

Ընդ որում, պետք է արձանագրենք, որ որքան այդ պայմանները թուրք-ադրբեջանական տանդեմին են խանգարում, որպեսզի նրանք վերջնականապես իրականացնեն հայոց պետականությունը ոչնչացնելու իրենց երազանքը, ճիշտ այդքան էլ դրանք Հայաստանի համար՝ սեփական պետության դիմադրողականությունը մեծացնելու հնարավորություններ են ստեղծում:

Սակայն, որպեսզի Հայաստանը կարողանա, իրենից անկախ, իրեն ընձեռնած այս հնարավորությունը եւս չծախսի «ժողովրդավարության օազիս», «տարածաշրջանի ամենամարտունակ բանակ», «կազմակերպված պետություն» ու այլ այսպիսի անիմաստ հեքիաթներ հորինելու ու դրանց հավատալու վրա, այլ ծախսի պետության դիմադրողականությունը մեծացնելու, նրա տնտեսությունում եւ բանակում եղած հնարավորություններն ու կարողությունները լավարկելու համար, ապա պետք է սկսի ոչ թե «այսօր խաղաղություն է, թե խաղաղություն չէ»-ն պարզելուց, այլ Նիկոլին իշխանությունից հեռացնելուց՝ նրան իշխանազրկելուց:

Այս իմաստով, որքան էլ Նիկոլը փորձի վիճակն այնպես ներկայացնել, թե այս երկրի այսօրվա խնդիրը գրագետ վարչապետ ունենալու կամ չունենալու խնդիրն է, միեւնույն է, այս ժողովուրդն ու այս երկրի քաղաքացին պետք է հասկանան, որ այս երկրի այսօրվա խնդիրը ոչ թե գրագետ վարչապետ ունենալու-չունենալու մեջ է, այլ ուժեղ առաջնորդություն ու ուժեղ առաջնորդ ունենալու կամ ուժեղ առաջնորդություն ու ուժեղ առաջնորդ չունենալու:

Այս առումով, անկախ ամեն ինչից ու հատկապես անկախ իրենց բոլոր փորձերից, Նիկոլն ու իր վարչախումբը պետք է հասկանան, որ այլեւս անցել են այն ժամանակները, երբ իրենք կարողանում էին տարբեր մանիպուլյացիաներով ու արհեստական օրակարգերով խաբել կամ վախեցնել այս ժողովրդին ու այս երկրի քաղաքացուն: Նրանք պետք է հասկանան, որ առաջին հերթին հենց իրենց համար է լավ, որ իրենք եւս այս ժողովրդի ու այս երկրի քաղաքացու նման հավատան, որ հունիսի 8-ն անպայման գալու է, ու այն անպայման պետք է առանց Նիկոլի լինի, որ աշունն ու սեպտեմբերն էլ են անպայման գալու, եւ դրանք անպայման առանց պատերազմի են լինելու, ինչքան էլ Նիկոլ Փաշինյանը փորձի հակառակը ներկայացնել:

Գալուստ ՍԱՐԳՍՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am